№ 204 ՈՒՐԲԱԹ, 18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 18 ՍԵՊՏԵՄ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԱՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և ազգ օրերից)

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Բայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».

TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի Ց ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 4 ՐՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խընդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Բայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

6-րդ Հայկական Կամաւորական գնդի Կենտրոնական Կոմիտէն յայտարարում է ի գիտութիւն հասարակութեան, պաշտօնական անձանց և հիմնարկութիւնների, որ կառավարական պատգամ մարմնի կողմից ճանաչված և հաստատված է ՀԱՅԿԱԿԱՆ 6 ՐԴ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԳՆԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷՏԸ։ Այդ Կոմիտէն է հանդիսանում այսուհետև գնդի անունից խօսող, բանակցող և կարգադրող միակ պաշտօնական և իրաւասու մարմինը, դէպի որը պէտք է ուղղվեն գնդի անունով լինելիք գրագրութիւնները, նպատակները և դիմումները։ Օրինաւոր կը ճանաչվեն միայն այն ձեռնարկները և դիմումները, որոնք թոյլատրված և վաւերացված կը լինեն բացառապէս Կոմիտէտի պաշտօնական թղթով և կնիքով։

Հայկական 6-րդ Կամաւորական գնդի Կենտրոնական Կոմիտէտի
Նախագահ՝ Սիմ. Հովսեփեան, քարտուղար՝ Ազ. Տէր Վարդանեան

Դրամական առաքումները ուղղվելու են Կոմիտէտի գանձապահ Յակոբ Ալէքսանեանին։ Կոմիտէտի հասցէն. Тифлисъ, Николаевская ул. № 25. кв. 3. Ц. Комитету 6-ой Ар. Доб. Дружины.
առ. (ա.մ.) 647. 3—2

Թիֆ. Հայկական Կենտրոն. Կոմիտէն եւ Կովկ. Հայոց Բար. Ընկ. 25 և 26 սեպտեմբերի կազմակերպում են յօգուտ զաղթականների տուփերով ժողովարարութիւն, ուստի խնդրում են այն անձանց, որոնք կը ցանկանան մասնակցել ժողովարարութեանը՝ մինչև 23 ամսոյս դիմել հետևյալ տասխան քաղաքամասերի կարգադրիչ տիկիններին։

I Քաղաքամասում.— Մ. Գ. Մինկէվիչ—Օլգինսկայա, տուն Դորդանեանի.
II » Վ. Ի. Անանեան—Գրիբոյեդովսկայա, 15.
III » Ռ. Ս. Շահպարոնեան—Բոտիչչեվսկայա, 13.
IV » Ե. Գ. Ղորղանեան—Սերգիէվսկայա, 14.
V » Տիկին Բաղդասարեան—Վորոնցովսկայա, 31.
VI և VII » Հայ Օրիորդների Կոմիտէ—Պուշկինսկայա, 11.
VIII և IX » Ն. Ի. Ալիբէկեան—Բերբուտովսկայա, 54.
X և XI » Կ. Ռ. Կազարովա—Բէուտովսկայա, 27։
(4.) առ. 653. 2—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բոտիչչեվսկայա 13, տելեֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժական կարգ ունեցող մնայուն (ստացիոնարային) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրօք դրկելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 1—12 առ.։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վասիլև-Լզորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ե. Տէր-Ներսէսեան
Ա. Ռ. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(չ.ու կ.) առ 970. 100—88

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՕՐԱՏՈՐԻԱ
ԿԷՈՆՃԵԱՆ ԱՍՈՒՍԻՆՆԵՐԻ
Պիտակ—ոսկուց, արծաթից, ֆարֆորից և այլն։ Անամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամներ ոսկուց (առանց բիմբի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։
Ընդուն. 10—2 առաւ. 4—7 երեկ. Լերմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրեուլկից։
(ա. օ.) առ. 515. 100—30

Թերլիցի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՆԵՐՔԻՆ հիւանդութիւնների ընդունելութիւն. առանձնապէս կրծքի, թոքերի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի. բժշկութիւն նաև խան ՅՈՒՐԵՐՈՎԻՆՆԵՐՈՎ, ստիստական ՆԵՎՐՈՊԱԹՈԼՈԳԻԱՅՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննութիւնը և լուսանկարները լուսաւորված ՊՐՆՑԳԻՆԵԱՆ ՀԱՅԹԱՑԻՆ ՃԱՌԱԳԱՅԹԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցերեկ. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՀՈՒՐԻՆԵՐԻՆ առ ժ. 9—10 ՀՐԻ։ Бебутовская, 23. тел. 7—29
առ. (ա. օ.) 504. 100—39

ԿՈՄՍ ՎՕՐՈՆՑՕՎ-ԴԱՇԿՈՎԸ

—

Այսօր, սեպտ. 18-ին, Կովկասի նախկին փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովը թողնում է մեր երկիրը, որը նա կառավարեց ամբողջ 10 տարի։

Մեր նպատակը չէ այժմ քննադատել կոմսի պետական գործունէութիւնը և երկրի կառավարութիւնը այդ 10-ամեայ ընթացքում և տալ նրա արժանաւոր գնահատութիւնը։ Դրա համար ներկայ րոպէն բնաւ չէ ներկայացնում լուրջ օբեկտիվիզմի պայմաններ, ոչ ևս մենք ձեռքի տակ ունենք կարևոր տուեալներ և ուսումնասիրութիւններ, և շատ կէտեր դեռ բաւականաչափ լուսաբանված չեն ու միայն ապագայում կարող են լուսաբանվել։

Սակայն, գտնվելով դէմ առ դէմ այն հանգամանքի առաջ, որ մենք այսօր ողջերթ ենք մաղթում կոմսին, մենք բարոյական պարտք ենք համարում մի քանի խօսքով ուրուագծել գործունէութիւնը այն պետական անձի, որ առանձնապէս իր վրա է գրաւել հայ ժողովրդի համակրութիւնը և ուշադրութիւնը, նկատվել է ուրիշներից ևս իբրև բարեկամ և բարեացակամ հայ ժողովրդի։

Ծանր և դժնդակ օրերում, հայթուրքական ամօթալի ընդհարումների օրերում, Գօլիցինեան մղձաւանջային ըէժիմից իբրև ժառանգութիւն մնացած, եկաւ մեր երկիրը կառավարելու կոմս Իլլարիոն Իվանովիչ Վորոնցով-Դաշկովը։ Այդ մեղալից և ամօթալից ընդհարումները չը դադարեցին անմիջապէս նրա գալով. բաւական երկար ժամանակ պէտք եղաւ զսպելու և խեղդելու նրանց, և կոմսի առաջին գործերից մինն եղաւ դումարել հայ-թուրքական խորհրդակցութիւն, բացայայտելու համար ընդհարումների պատճառները։ Այդ պատճառները չը բացատրվեցին, չը լուսաբանվեցին իրանց ամբողջ մերկութեամբ, բայց մի բան պարզ եղաւ, որ կոմսը հետամուտ է լսել ժողովրդի, հասարակութեան կարծիքը, ձայնը, ընդառաջ գնալ նրա ցանկութիւններին, իղձերին, կարիքներին։ Կոմսը հէնց առաջին քայլում ցոյց տուեց, որ ինքը կողմակից չէ ըէակցիոն միջոցների այլ ցանկանում է կուլտուրական միջոցներով, ռուսական կուլտուրայի հակազդեցութեամբ գրաւել Կովկասի բազմացեղ և բազմալեզու ազգութիւնները դէպի ընդհանուր պետական կեանքը։ Իբրև իմաստուն և խոշոր պետական գործիչ, նա ըմբռնեց, որ ամեն մի ժողովրդի ազգայնական-կուլտուրական ձգտումները չը պէտք է խեղդել, այլ պէտք է թոյլ տալ նրանց արտայայտութիւնները և գրանով սերտ կերպով կապել այդ ժողովուրդները ընդհանուր պետական ձգտումների հետ։

Ու, արդարև, իր 10 ամեայ կառավարութեան ընթացքում, կոմսը, ղեկավարվելով այդ սկզբունքով, ձգտեց մեր երկիրը և նրա բազմացեղ, բազմալեզու ազգութիւնները հաղորդակից անել ռուսական մեծ կուլտուրային, նախ ստեղծելով նրանց համար մի քանի հաստատութիւններ, որ վաղուց վայելում է Ռուսաստանի բնիկ ժողովուրդը, ինչպէս զէմստվո, բարձրագոյն դպրոց, գիւղացիական ըէֆորմ, երկրորդ՝ ոչ մի խոչընդոտ չը յարուցանելով նրանց ազգային-կուլտուրական գոյութեան և ինքնորոշութեան դէմ։ Ու թէպէտ նրան չաջողվեց կամ ժամանակ չը տրվեց իրագործել այդ ամենը, բայց նա դէթ հարթեց ճանապարհը և մի երկուսն ևս իրագործեց, ինչպէս պոլիտեխնիկումի հարցը և գիւղացիական ըէֆորմը։

Քաղաքացիական և լայն բարեհոգչական տեսակէտից նրա օրով Կովկասը մի առանձին և աչքի ընկնող փոփոխութիւն չը կրեց, բայց որ Կովկասի ազգութիւններն իրանց ազգային կուլտուրական զարգացման առաջ խոչընդոտներ չը տեսան, դա փաստ է, և այդ իրողութիւնը պարտական են կոմս Վորոնցով-Դաշկովի քաղաքականութեան։ Ի մասնաւորի հայերի վերաբերմամբ նա ցրեց այն լեգենդան, թէ նրանք սեպարատիստ տարր են, և ցոյց տուեց, որ հայերը կազմում են մի այնպիսի տարր, որի վրա Ռուսաստանը կարող է ամենայն վստահութեամբ յենվել իր քաղաքական ծրագիրների մէջ Արևելքում։

Կոմսը անտարբեր չէր և դէպի Թիւրքիայի հայերի վիճակը, ... Ու թէև, դժբաղդաբար, պատերազմը . . . . . ենթարկեց Թիւրքիայի հայերին սոսկալի աղէտների, թէև բովանդակ հայ ազգը այսօր սուգի մէջ է ընկղմված իր եղբայրներին հասած մեծ և անօրինակ աղէտի պատճառով, բայց նոյնիսկ այդ համազգային սուգի ժամանակ մենք չենք կարող մոռանալ կոմսի բարեհաճ և բարեացակամ վերաբերմունքը դէպի մեզ, մանաւանդ նրա նպատաւոր վերաբերմունքը դէպի մեր ազգային կուլտուրական-լուսաւորական հաստատութիւնները։ Ու հէնց այդ նկատումներով երէկ մեր ազգային-կուլտուրական-լուսաւորական հաստատութիւնների ներկայացուցիչները իրանց բարոյական պարտքը համարեցին արտայայտել առանձին ուղերձով այդ զգացումները։

Ու որքան էլ վերջին երկու տարիները կոմսը իր հիւանդութեան պատճառով չը կարողացաւ նախկին եռանդով պարապել գործերով և նոյնիսկ որոշ դժգոհութիւն յարուցեց Պետական Դումայի մի քանի պատգամաւորների կողմից, բայց այդ թերութիւններով հանդերձ նրա 10 ամեայ կառավարութիւնը նշանաւոր և խորհրդաւոր կնիք է կրում Կովկասի պատմութեան մէջ։

Հ. Առաքելեան

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՓՈԽԱՐՔԱՅԻ ՊԱՀԱՍՈՒՄ

—

Ինչպէս վաղօրօք յայտարարված էր, Կովկասի նախկին փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովը երէկ պէտք է ընդունէր քաղաքային դումայի ձայնաւորներին, հասարակական, բարեգործական, կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչներին, որոնց թւում և Թիֆլիսի հայկական հաստատութիւնների ներկայացուցիչներին։ Վերջիններս առաւօտեան ժամը 10-ին հաւաքվեցին հայոց առաջնորդարանը և, գլխաւորութեամբ առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսի, դիմեցին փոխարքայական պալատը, ուր արդէն հաւաքվել էին և այլ պատգամաւորութիւններ և ներկայացուցչութիւններ։

Այդտեղ էին Թիֆլիսի քաղաքային դումայի քաղաքագլուխ Ալ. Խատիսեանի, ուպրավայի անդամների և ձայնաւորների հետ, Թիֆլիսի վաճառականութիւնը յանձին աւագ Միլիանի և պատգամաւորների, մեշչանների, արհեստաւորների աւագներ Բ. Առաքելեան և Բաբսեղեան. հայ-լուսաւորչական, կաթոլիկ առաջնորդները, հրէաների, մոլոկանների, մուսուլմանների հոգևոր մարմինների ներկայացուցիչները, Թիֆլիսի, Բաքվի, Գանձակի ազգային-կուլտուրական ընկերութիւնները իրանց պարագլուխներով, Երևանի, Ալէքսանդրոպոլի, Գորիի, Սղնախի քաղաքագլուխները և աւագները և ուրիշ շատ հաստատութիւնների ու ընկերութիւնների ներկայացուցիչներ։ Ժամը 11-ին ամենքը հաւաքվեցին Դեղին դահլիճում։ Կոմս Վորոնցով-Դաշկով, դուրս գալով իր սենեակից, բարևեց և դիմելով ամենքին ասաց, թէ ինքը ցաւով և ափսոսանքով է հեռանում Կովկասից, բայց, դժբաղդաբար, հանգամանքները ստիպում են նրան հեռանալ. ինքը վաղուց խնդրել էր Թագաւորը կայսրին ազատել իր տեղ մի առողջ և աւելի երիտասարդ կառավարիչ, որովհետև իր առողջութիւնն այլ ևս թոյլ չէր տալիս իրան շարունակել բարեխղճօրէն իր պաշտօնը։ Շնորհակալ եմ,—ասաց կոմսը,—ձեր դէպի ինձ միշտ ցոյց տուած վստահութեան և բարի զգացումների համար։ յոյս ունեմ՝ դուք ևս ինձ չէք մոռանայ։

Ապա կոմսը դիմեց առանձին պատգամաւորութիւններին։ Մեսրոպ եպիսկոպոս ներկայացրեց կոմսին Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսի նամակը և յայտնեց, որ Վեհափառը պատուիրել է իրան յանձնել նամակը և իր օրհնութիւնն ու բարեմաղթութիւնները տալ։ Կոմսը սրտագին շնորհակալութիւն յայտնեց։ Ապա խօսեցին Թիֆլիսի և Բաթումիի ազնուականութիւնների պարագլուխները, Թիֆլիսի քաղաքագլուխը, Երևանի, Ալէքսանդրոպոլի քաղաքագլուխները, վաճառականների աւագ Միլիանը, մեշչանների աւագ Բաբսեղեանը, ներկայացնելով և իրանց ուղերձները։ Դրանցից յետոյ հայ կուլտուրական-լուսաւորական հաստատութիւնների կողմից՝ մասնաժողովի կողմից պատրաստված ուղերձը կարդաց Հայոց Բարեգ. Ընկ. նախագահը. ապա խօսեցին մոլոկանները, հրէաները, արհեստաւորները, որոնք ներկայացրին և մի արծաթեայ գեղեցիկ սուր։

Կոմսը ամենքին ուշադրութեամբ լսում էր և պատասխանում։ Թողնելով յաջորդ համարում տալ ընդարձակ ելութեան մանրամասն նկարագրութիւնը և արտասանված ճառերի ու կարդացված ուղերձների բովանդակութիւնը, ինչպէս և կոմսի տուած պատասխանները, այսօր ապում ենք հայ կուլտուրական-լուսաւորական հաստատութիւնների մատուցած ուղերձը, որին ստորագրել են հետևեալ հիմնարկութիւնների նախագահները կամ ներկայացուցիչները. 1) Ներսիսեան դպրոց, 2) Յունանեան դպրոց, 3) Գայիանեան դպրոց, 4) Թիֆլիսի հայոց ծխական դպրոցները, 5) Կ. Հայ Բարեգործ. Ընկ., 6) Հայաշէնեաց Բարեգ. Ընկ., 7) Նպաստամատոյց Ընկերութիւն, 8) Հայ Գրողների Ընկերութիւն, 9) Հայոց Հրատարակչական Ընկերութիւն, 10) Հայոց Դրամատիկական Ընկերութիւն, 11) «Մեղու» ընկերութիւն, 12) Որբախնամ Ընկերութիւն, 13) Հայ Ազգագրական Ընկերութիւն և մի քանի ուրիշներ։

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԿՈՒԼՏ. ԵՒ ԲԱՐԵԳ. ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԿՈՎԿԱՍԻ ՆԱԽԿԻՆ ՓՈԽԱՐՔԱՑ ԿՈՄՍ ՎՕՐՈՆՑՕՎ-ԴԱՇԿՈՎԻՆ

—

Ձերդ Պայծառափայլութիւն
Արժանայարգ կոմս Իլլարիոն Իվանովիչ.

Միապետի բարձրագոյն կամքով Դուք 1905 թուականին նշանակվեցիք Նորին Մեծութեան փոխարքայ Կովկասում։ Ներկայումս, երբ տասնամեայ կառավարութիւնից յետոյ Ձեր Պայծառափայլութիւնը թողնում է մեր երկիրը, որը դուք ճանաչեցիք, սիրեցիք և որի հետ ընտելացաք, մենք, հայոց կրթական-կուլտուրական և բարեգործական հաստատութիւնների ներկայացուցիչներս, բարոյական պարտք ենք համարում արտայայտել այն զգացումները, որ մեր մէջ ծագեցնում է Ձեր տասնամեայ գործունէութիւնը փոխարքայի բարձր կոչման մէջ։

Ձեր Կովկաս գալով՝ մեր երկրի հասարակական կեանքը, որ մինչ այդ ճնշված դրութեան մէջ էր գտնվում, շնորհիւ Ձեր լուսամիտ վերաբերմունքին դէպի կուլտուրական և կրթական ձեռնարկութիւնները, նորից հնարաւորութիւն ստացաւ ազատ և անարգել զարգանալու։ Դուք Ձեզ հետ բերիք հայոց եկեղեցու գրաւված կալուածների վերադարձման ցանկալի լուրը. Դուք մեզ աւետեցիք հայ դպրոցների և ընկերութիւնների դռների վերաբացումը։ Դուք ոչ միայն նրանց ազատեցիք բոլոր կողմակի ոտնձգութիւններից և թոյլ տուիք, որ նրանք հետզհետէ զարգանան, այլ և հովանաւորեցիք նրանց Ձեր բարձր ուշադրութեան նշաններով։ Ցոյց տալով վստահութիւն դէպի հայ ժողովուրդը, տալով նրան ազատութիւն կուլտուրական-կրթական ասպարէզում՝ Դուք նպաստեցիք ամրապնդելու նրա մէջ ռուս-կուլտուրական և ռուսական քաղաքացիութեան զգացումը։

Ձեմտավային ինքնավարութեան ներմուծման, ինչպէս և սումսկայայի հիմնարկուածքագոյն ուսմեր երկրում առաջին անգ հարցը դրիք իրական հողի վրա, որ լ։ Դուք ապացոյց է, թէ Ձեր Պայծառափայլութիւնը օրպիսի խնամք էր տածում Կովկասեան երկրի կուլտուրական և նիւթական զարգացման վրա։

Վերջապէս պատմութիւնը կը գնահատէ Ձեր Պայծառափայլութեան պարարտակամութիւնը՝ ընդ առաջ գնալ հայ ժողովրդի տենչերին արտաքին քաղաքականութեան գաւառում։ Ու թէպէտ դժնդակ պատերազմի ծանր անիւը հայկական աշխարհի վրայով անցաւ, տրորեց մեր ժողովուրդը և նրան արիւնաքամ արաւ սահմանի այս և այն կողմերում, սակայն դեռ կենդանի է ժողովրդի յոյսը լաւագոյն ապագայի վրա։

Այսօր, երբ մենք ճանապարհ ենք ձգում Ձեր Պայծառափայլութիւնը Ձեր յաւէտ սիրելի և Ձեզ սիրող երկրից, բարեմաղթելով Ձեզ երկար և քաջառողջ կեանք, մեր քաղցը պարտականութիւն ենք համարում՝ հայ կուլտուրական կրթական և բարեգործական հիմնարկութիւնների կողմից արտայայտել խորին և անկեղծ յարգանքի և ակնածութեան զգացումները նաև Նորին Պայծառափայլութիւն կոմսուհի Ելիզաւետա Անդրէէվնային, որ միշտ և անխափան բարի խօսքերով և գործերով օգնութեան է եկել բոլոր կարօտեալներին և նպաստել օգտակար ձեռնարկութիւններին։

Մեղանից հեռանալիս՝ Ձեր Պայծառափայլութիւնները համոզված թող լինեն, որ Կովկասում Ձեր անցկացրած տարիների յիշատակը անջնջելի կը մնայ խորապէս Ձեզ յարգող ու սիրող հայ ազգաբնակութեան սրտերում։

ԿՈՄՍ Ի. Ի. ՎՕՐՈՆՑՕՎ-ԴԱՇԿՈՎԻ ՄԵԿՆԵԼՈՒ ՇՈՒՐՋԸ

—

Այսօր, առաւօտեան ժամը 10-ին, նախկին փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի և կոմսուհի Վորոնցով-Դաշկովայի Թիֆլիսից մեկնելու առիթով՝ Սիոնի տաճարում էկզարխ Պիտիրիմ արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ ուղղափառ հոգևորականութիւնը կը կատարի ողջերթի մաղթանք։

—

Երէկ կոմսին ներկայացաւ մի պատգամաւորութիւն Թիֆլիսի վաճառականներից և բօրսային կոմիտէի ընկերութիւնից, վաճառականների աւագ Ար. Միլեանի գլխաւորութեամբ, և ներկայացրեց չորս օր առաջ կայացրած այն որոշումը, որը տպագրվեց «Մշակի» մէջ։ Այդ որոշումը դրված էր փառահեղ կազմի մէջ, որի երեսին գրված էր. «Նոցին Պայծառափայլութեանց կոմս Իլլարիոն Իվանովիչ և կոմսուհի Ելիզաւետա Անդրէեվնա Վորոնցով-Դաշկովներին Թիֆլիսի վաճառականների և բօրսային ընկերութիւններից 1905—1915 թ.թ.»։

—

Թիֆլիսի վաճառականների լազարէթի, որը գտնվում է կոմսուհի Վորոնցով-Դաշկովայի հովանաւորութեան ներքոյ, վարչութիւնը ելեկ կոմսուհուն ուղերձ ներկայացրեց։

—

Կոմսին ներկայացան զաւառներից և Երևանից ու Ալէքսանդրոպոլից եկած պատգամաւորութիւնները։

Կոմսը առանձին-առանձին ընդունելով զինուորական և քաղաքացիական հաստատութիւնների պաշտօնեաներին՝ նրանց շնորհակալութիւն յայտնեց ցոյց տուած գործակցութեան համար և ուրախութիւն յայտնեց, որ իրան փոխարինում է Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիչը, որին ինքը ճանաչում է դեռ մանկութիւնից, «օրպէս բարի և լաւ մարդու, և որը, անկասկած, ջերմ արձագանք կը տայ երկրի կարիքներին և կիրականացնի այն հարցերը, որոնք իմ օրով մնացին չը լուծված»։

Կոմսի խօսքերը խորը տպաւորութիւն թողին ներկայ եղողների վրա։

Փոխարքային պատասխանեց սենատոր Ն. Լ. Պետերսոն, որպէս Կովկասի քաղաքացիական մասի կառավարութեան աւագ ներկայացուցիչ։

Պետերսոնը իր ճառի մէջ թուեց կոմսի բարեմասնութիւնները, շնորհակալութիւն յայտնեց և վերջում առողջութիւն և այժ ցանկացաւ նրան։

Կոմսը, համբուրելով Պետերսոնին, կրկին անգամ շնորհակալութիւն յայտնեց նրան և բոլոր գործակիցներին։

Կովկասի ուսումն. շրջանի հոգաբարձու Ն. Լ. Բուդոլֆը ուսումն. շրջանի կողմից ուղերձ ներկայացրեց կոմսին։

—

Կոմսի մեկնելու առիթով օղջերթի հեռագիրներ են ստացվում Կովկասի բոլոր գաւառներից և այլ քաղաքներում գտնվող նարկութիւններից ու ընկերութիւններից։

ԿՈՄՍՈՒՀԻ ՎՕՐՕՆՑՕՎԱԴԱՇԿՈՎՈՒՑԻ ԱՑԵԼԻՑ Հ. ՆՊԱՍՏ. ԸՆԿ. ՈՐՈՇՈՒՄԸ

—

Դեր. Ժ. 3-ին կոմսերէկ, ամսու 12-ին Վաղարշապատ, ուղեկցուհի Ե. Ա. Վասը Զեբրշովի և Կարմիր ցութեանսրութեան լիազոր Գոլուբեվի, Խաչ Հայ Նպաստ Ընկերութեան օրբասուհի։

Մուտքում հիւրերին ընդունեցին Ընկերութեան փոխնախագահ Հ. Առաքելեան, օրբանոցի կառավարիչ Սա. Մալխասեանց և ա. տ. Ռ. Շահպարոնեան, Ս. Դանիէլ-Բէկ և Եղ. Առաքելեան։

Մի քիչ առաջ ժամանել էր նաև Թիֆլիսի թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը։

Մուտքի առաջ օրբերից մէկը կոմսուհուն մատուցեց ծաղկեփունջ։

Հ. Առաքելեան շնորհակալութիւն յայտնեց կոմսուհուն և նրա ուղեկիցներին, ինչ-[illegible] սրբազանը, որ բարեհաճել էին այցելել օրբանոցը։

Ապա կոմսուհին և հիւրերը այցելեցին բոլոր սենեակները և շատ գոհ մնացին։ Որբերն ընդունեցին հիւրերին հայերէն «Կեցցէներով»։

Ապա կոմսուհին օրբերին բաժանեց իր հետ բերած քաղցրեղէնը և կարկանդակները։

Դրանից յետոյ նորին պայծառափայլութիւնն ու նրա ուղեկիցները հրաւիրվեցին թէյի սեղանի և մօտ մէկ և կէս ժամ մնացին օրբանոցում։ Կոմսուհին մեկնելիս յայտնեց իր գոհունակութիւնը։

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՈՒՐԱԸ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

16 սեպտեմբերի

ԱԹԷՆՔ.—Կ. Պոլսից հաղորդում են, որ Թիւրք-բոլշեւիկեան համաձայնութիւնը ստորագրելուց յետոյ Թիւրքիա մուծվեց ալիւրի մեծ քանակութիւն։ Նաւթի գինը իջաւ 75%-ով։

—

(Հրագիրներից)

◆ Թիւրքերը պաշտօնապէս յայտարարել են, որ Օդեսայի մօտ գերմանական-թիւրքական մի ռազմանաւ ջրասուզել է «Պատգամնիա» նաւը։

◆ Ամբողջ Թիւրքիայում ազգաբնակութիւնից դրամ է շորթվում նոր յածանաւ կառուցանելու համար՝ խորտակված «Մէջիդիէի» փոխարէն։

◆ Կ. Պոլսից հաղորդում են, որ Թիւրքիայում հրատարակվել է մի հրաման, որի համաձայն ամեն բնակարան վարձող պարտաւոր է զինուորական վարչութիւնը յանձնել մի շաբաթվայ ընթացքում մի մահճակալ անկողնով, կամ պէտք է վճարել 1½ լիրա։

◆ Զունդուլդակում ռուսաց նաւատորմը ջրասուզել է Թիւրքական մի քանի առագաստանաւ քարածուխով լի։

ԹԻՒՐՔԱԿԱՆ ԲԺՇԿԻ ՕՐԱԳՐԻՑ

—

Ն. Օգանովսկին «День»-ի մէջ խօսում է Թիւրքական մի բժշկի օրագրի բովանդակութեան մասին։

Այդ բժշկը, որ գերի է ընկել ռուսների ձեռքը, ծագումով լեվանտացի է, քրիստոնեայ, իր կրթութիւնն ստացել է Պարիզում, մի խօսքով ինտելիգենտ մարդ է, որ կամաւոր անձնատուր է եղել Ալիպեթում (Վանի լճի հիւսիսային ափին է գտնվում)։

Նրա մօտ, մի քանի օղջ մնացած իրերի մէջ, պահպանվել է մի փոքրիկ օրագիր, որի մէջ նա գրել է իր դիվիզիայի անցած ճանապարհի պատմութիւնը. այդ դիվիզիան Սիբիայից (Խամէ քաղաքից Հալէպի մօտ) եկել է Բիթլիս։ Մի շարք տուեալների հետ, որոնք ունեն ռազմական նշանակութիւն և այդ պատճառով անկարելի է հրատարակել, օրագրի մէջ կան օչ պակաս հետաքրքրական կենցաղական գծեր և աւելին՝ հայերի գլխովին կոտորածի պատկերներ, կոտորածի, որ սկզբում եղել է մասնակի, իսկ յետոյ սիստեմատիկաբար՝ Կ. Պոլսից եկած հրահանգների համաձայն։

Այն դիվիզիան, որի մէջ ծառայում է եղել օրագրի հեղինակը, կազմված է եղել արաբներից և քիւրդերից։ Սկզբում նշանակված լինելով անգլիացիների դէմ կռուելու, այդ դիվիզիան յետոյ ուղարկվում է հիւսիս, ինչպէս ասել են արաբ-օֆիցէրները, կործանվելու, որովհետև կօրպուսի Թիւրք հրամանատարը, Ֆոնդերդդին փաշան, դիվիզիան արշաւանքի է ուղարկում չնչին ռազմամթերքով և, յոգնեցուցիչ արշաւանքից ու կռուից յետոյ, չէ ուղարկում և օչ մի ատէր՝ դիվիզիան լրացնելու։ Այդպիսով, Սիբիայից դուրս գալով 7—8000 հոգով, դիվիզիան յունիսի վերջին կորցնում է մինչև 3000 հոգի և հետզհետէ հալվում է, որովհետև զօրքերը կերակրվում էին բացառապէս թալանով, իսկ նրանց ընթացած ճանապարհին քիւրդերը և զօրքերի ուկարգ մասերը ոչնչացրել էին, ինչ կարող էին։ Ասկէրները ուտում էին օրական մի անգամից օչ աւելի, այն էլ կամ օչխար կամ ուրիշ միս, եթէ շրջակայքում տաւար էին գտնում, կամ ալիւրից շինած բլիթներ, որ հում-հում բաժանվում էր զինուորներին, և որոնց եփում էին իրանք զինուորները։ Ջուր խմում էին երբեմն այնպիսին, որ անասունը չէր խմի. սրանից էլ շատերը հիւանդացել են տիֆով, փորլարիզով, տենդով, օրոնց, ինչպէս և շատ ծանր վիրաւորների, փաթեթների մէջոցներ չունենալու համար, յաճախ թողնում էին ճանապարհին։ Սողալով, օրինակ, վիրաւորը հասնում էր բատալիոնի փաթեթային կայանը, այնտեղ կապում էին նրա վէրքը, տալիս մի կաբ հաց և ասում. «Սողա առաջ»։ Նա էլ սողում է դէպի քիւրդական մօտակայ գիւղը, ուր և, եթէ չէ մեռնում, պառկում է առանց բժշկական օգնութեան։ Թեթև վիրաւորվածները նորից ետ էին դառնում զօրքի մէջ...

Այս քաղցած, հիւծված, բազմացեղ մարդիկ, որ թշնամաբար էին տրամադրված դէպի տիրապետող Թիւրք ազգութիւնը, միացել էին միայն «ղազաւաթի»—սրբազան պատերազմ ընդդէմ քրիստոնեաների—ընդհանուր գաղափարով, որը այստեղ, Փոքր-Ասիայի խորքերում, դեռ ընդունակ է մրթագնել մուսուլմանի միտքը և բռնկել հոգին կրօնական տրամադրութեամբ։ Այստեղից էլ ծագում են այն անհաւանական զանազանութիւնները և բռնութիւնները անպաշտպան հայերի նկատմամբ, որոնց ականատես է եղել օրագրի հեղինակը իր ճանապարհորդութեան առաջին օրից մինչև վերջին օրը։

Այդ զանազանութիւնները, բնականաբար, հացրել են փոխադարձ կատաղութեան։ Հայերը երբեմն պարտաւոր են եղել վրէժ առնել իրանց թշնամիներից, թէկուզ կոչնման գնով։ Սիբիայի բժշկի օրագրում, մայիսի 30 թուով, գրված է այսպիսի մի դէպք—Մի գիւղում, մի քանի մուսուլմանների մէջ, որոնք ինչ-որ յանցանքի համար բանտ են եղել նստած, եղել է մի հայ։ Սա թագուն ձեռք է բերում մի թիթեղեայ ման նաւթով, գիշերը նաւթ է ցանում բանտի շէնքի վրա և իրան այրում նրա մէջը եղածների հետ միասին։ Մի ուրիշը, որ մեղադրվում է եղել ռումբ պահելու մէջ, երկար խարում է օսմիկանութեան, ցոյց է տալի զանազան տեղը, ուր իբր թէ պահել է ռումբերը. վերջապէս նրան աջողվում է բարձրանալ մի բաւական բարձր տան հարթանիքը, որտեղից նա իրան նետում է ցած, մասդրվելով ընկնել քարած բակում կանգնած օֆիցէրի վրա, բայց վրիպում է և մեռնում տեղն ու տեղը։

Ճանապարհին, օրագրի հեղինակը տեսնում է տասնեակ դեսեր, հովիտներ, ձորեր, քանդված գիւղեր՝ լի մարթոտված մարդկանց, երեխաների և կանանց դիակներով, երբեմն մի մի սեղ ուռած նրանց փորին կամ կրծքին։

Սեաբիկ գիւղում նա ականատես է լինում մի այսպիսի տեսարանի. բանտ են դրած լինում հայ մարդիկ։ Մէկը կաշառում է ժանդարմին, և սա թոյլ է տալիս կալանաւորի կնոջ, որ երեխայի գլուխը մտցնի անցքից, որ հայրը կարողանայ համբուրել նրան։ Այդ բոպէին գալիս է պահակախմբի հրամանատարը, սաստրագրեարներին հայհոյում է և երեխայի ոտքերից քաշում անցքից. երեխան դուրս է գալիս մեռած և ամբիւնոտված։ Մայրը ճչում է, լալիս. հրամանատարը ծեծում է նրան հրացանի կոթով, իսկ յատակին ընկած երեխային ոտքով շպրտում է մի կողմ։

Այն ժամանակ, երբ այս դիվիզիան մրանում է Դիարբեքիր, քաղաքը գտնում են հրդեհված կիսով չափ և դիակներով լցված։ Զօրքերի գալուց մի քանի օր առաջ, տուրքական ինչ որ ոտնի օր, հրդեհվում է Թիւրքաց մի հիւրանոց։ Կրակը նեսում է մուսուլմանական թաղամասը, որի համար և մեղադրում են քրիստոնեաներին և սկսում մորթատել ամենքին, ովքեր չեն կարողանում փախչել։

Բայց ամենասարսափելի տեսարանը, այս եղակի ակնատեսը հանդիպել է Բիթլիսում։ Դեռ չը հասած Բիթլիսին, անատոլում նա տեսել է հենց նոր մորթատված մարդկանց դիակներ, որոնց կողքին եղել են բոլորովին մերկ երեք կին տաքերից կախված։

Սրանց մօտ գետնին սողում էր մի տարիկան մանուկ և ձեռքը մեկնում դէպի մայրը. իսկ մայրը, երեսը լցված արիւնով, տակաւին կենդանի, ձեռքը երկարացնում էր դէպի երեխան. բայց նրանք չէին կարողանում ձեռք հասցնել իրար։ Քիչ հեռու ընկած էին կանացի երեք դիակ արիւնլաւայ, և մի մանուկ՝ ծածկված մօր արիւնով՝ կանանցից մէկի կրծքին ընկած՝ սրինքն էր ծծում։

Քիւրդ ասկէրներից մէկը խղճում է երեխային և նրան վերցնում իր հետ, որպէսզի նրանից մի բարի մուսուլման դաստիարակի։ Հէնց Բիթլիսի մօտ, մայի հարթավայրում, նստած էին մօտ 2000 հայեր, շրջապատված պահակով. նրանք սպասում էին իրանց հերթին, որովհետև ամենքին միանգամից կոտորել անկարող էր տեղական ոստիկանութիւնը։

Բիթլիսի կոտորածին մասնակցել են և 36-դ դիվիզիայի ասկէրները։ Սակայն Թիւրք իշխանութեան կաշառակերութիւնը հնարաւորութիւն է տուել առուել հարուստ հայերին փրկել իրանց կեանքը։ Կայմակամը, լսելով այդ մասին, հրամայում է վառել յիշեալ հայերի տները։

Օրագրի հեղինակը տեսել է, թէ ինչպէս կայմակամի տան մօտ հրդեհում էին երկյարկանի մի տուն։ Երկրորդ յարկում երեսուն մի կին երեխան ձեռքին։ Նա նետվում էր լուսամուտից-լուսամուտ, ճչում էր «ման», բայց ոտեն կողմից հրացանի փողը էին ուղղվում դէպի նա։ Կրակը կամաց-կամաց բռնեց վերի յարկը, ծուխը մէկը միւսի ետեւից պատեց լուսամուտները, և այդ կինը այրվել է օրագրի հեղինակի աչքերի առաջ։

Խօսակցութեանը ներկայ ռուս բժիշկները լրացրին սիբիացու պատմութիւնը իրանց թարմ տպաւորութիւններով։ Հէրզ քաղաքում նրանք գտել են մի հայ աղջիկ, որի աղիքը դուրս է եկած յետոյքից, այնտեղ հրացանի փող կոխելու պատճառով։ Երբ գերի տակէրներին հարցնում էին, թէ մի՞թէ ամօթ չէ նրանց համար այդպիսի բան անել, նրանք պատասխանում էին, որ «այդպէս է սուլթանի հրամանը»*)։ Սիբիացի բժիշկը տեսել է այդ հրամանները. նրա առաջ սպանել են պատանդ վերցված հայազգիներին, որովհետև Կ. Պոլսից եկած հրամանը արգելել է Թիւրքերին այդ միջոցով փրկել հայ կանանց կեանքը։

Վերջերս ստացվեց գեներալ Զ...ի հեռագիրը։ Գեներալի վաշտը կանգ է առնում Վանի մօտ և քաղաք չէ կարողանում մտնել դիակների հոտից։ Հեռագրում ի միջի այլոց ասված է. «Վան քաղաքը ամբողջապէս աւերակ է։ Լաւագոյն շինութիւնները հրդեհված են, իսկ կաւաշէնները՝ քանդած։ Փողոցները և բակերը լի են մարդկանց և անասունների դիակներով։ Բնակիչների դոյքը կողոպտված է։

Թիւրքաց Հայաստանի բնաջնջման իր նմանը չունեցող այս արարքները, որ հաստատում են ակնատեսները, պաշտօնական անանց կողմից, վեր են ածված մի սիստէմի, որը գործադրում է Թիւրք կառավարութիւնը։ Եւ այս արարքները, ինչպէս երևում է, կործանարար են հայ ժողովրդի համար։ Դրանք նպատակ ունեն հողի երեսից ջնջել հայերին։

*) Մի քանիսը տալիս էին նոյնիսկ Վիլհելմի անունը։

ՌԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂԷՏԻ ԵՒ ՏԱՌԱՊԱՆԳԻ ԱՇԽԱՐՀԻՑ

(Այց Թիւրքահայ փախստականներին)

IV

Երևանում ստացած տպաւորութիւններս համեմատաբար մխիթարական էին։ Ի հարկէ, օրինակելի կամ նախանձելի վիճակ չունեն հայ փախստականները օչ մի տեղ։ Երևանում ևս հազարաւոր ընտանիքներ՝ փռված գետնին՝ կրում են բացօդեայ կենցաղի բոլոր հարուածները. այնտեղ ևս այցելուն հանդիպատես է լինում հանրական աղէտի և տառապանքի աղիողորմ տեսարանների. գանգատաւոր վայնասուն, ճիչ, աղաղակ, լաց ու կոծ, դալկահար դէմքեր, դիակնացած մարմիններ, հոգեվարքի ցնցումներ և այլն։ Բայց այն աշխատանքը և խնամքը, որոնք գործ են դրվում Երևանում՝ Խորէն եպիսկոպոսի գլխաւորութեամբ, ունեցել են և խոստանում են ունենալ՝ աւելի մեծ չափերով՝ մխիթարական հետևանքներ։

Երևան քաղաքը եղել է այն օղակման կէտը, էջմիածնի և նահանգի միւս մասերի միջև, որ ծառայել է բանակատեղի գաղթականական մեծ հոսանքների. մի կողմից ընդունել է էջմիածնից փախստականներ մեծ բազմութիւններով, միւս կողմից ցրել, ուղարկել է նրանց նահանգի զանազան անկիւնները՝ պահելով իր համար յատուկ բաժիններ։ Բուն Երևանում ապաստան են գտել շուրջ 20,000 փախստականներ, որոնց մեծագոյն մասը (մօտ 17,000) վանեցիներ են։ Իսկ որքան է ցրել Երևանը իր մէջ բանակած գաղթականներից դէպի զանազան գաւառներ ու շրջաններ, դա տեսնում ենք հետևեալ թուերից (ժամանակամիջոցը վերցված է յուլիսի 26-ից մինչև սեպտեմբերի 6-ը)։ Երևանը ուղարկել է դէպի՝

Թիֆլիս	38 փախստականներ
Ղարաքիլիսա . .	10 »
Ալէքսանդրոպոլ .	1688 »
Ղամարլուի շրջան	2439 »
Դաւալուի »	102 »
Բալլեանի »	575 »
Թալագիւղի »	323 »
Փարաքարի »	428 »
Աշտարակի շրջ. և	
Եղուարդ »	87 »
Քանաքեռի »	2033 »
Ախտա (Բայազ. գ.)	18161 »
Արտաշատի շրջան	1156 »
Դիլիջան	2491 »
Ընդամենը՝	29531 »

Նշանակում է Երևանը ընդունել է աւելի քան 50,000 փախստականներ (այդ թուի մէջ մտնում են նաև նրանք, որոնք Վանի երկրորդ գրաւումից յետոյ հայրենիք են վերադարձել Երևանից), որոնց մեծ մասին՝ (29,531+հայրենիք վերադարձածները) ցրել է նա դէպի զանազան վայրեր, իսկ քաղաքում ապաստանած շուրջ 20 հազար փախստականներից մինչև սեպտեմբերի 6-ը մնացել են 18,848 հոգի. պակասը պիտի բացատրել գլխաւորապէս մահացութեան դէպքերով, ինչպէս կը տեսնենք մենք ստորև։

Մի բան, որ պիտի արձանագրել իբրև մխիթարական փաստ, այն է, որ Երևանում խմբված փախստականների մէջ մահվան դէպքերը անհամեմատ փոքրաթիւ են, ի նկատի ունենալով էջմիածնի օրինակը։ Հետևեալ հետաքրքրական աղիւսակը ցոյց է տալիս, թէ ինչպէս են աճել և ինչ ընդհանուր թիւ են տուել Երևանի փախստականները (տղամարդկանց, կանանց և երեխաների, առանձին-առանձին) մահացութեան դէպքերը մի ամբողջ ընթացքում։ Մենք բերում ենք ստորև միայն էջմիածնի մահացուցակի ժամանակամիջոցը, որպէս զի շաբաթվայ և դիւրին լինեն համեմատութիւնները էջմիածնի և Երևանի մահացութեան դէպքերի։

Երևանի փախստականների մահացուցակը (յուլիսի 28 ից մինչև օգոստոսի 28-ը)։

Ամսաթիւ		Տղամարդիկ	Կանայք	Երեխաներ	Բոլորը միասին
Յուլիսի	28	1	2	—	3
»	29	1	1	2	4
»	30	1	2	—	3
»	31	—	1	3	4
Օգոստոսի	1	1	—	2	3
»	2	3	3	5	11
»	3	—	3	7	10
»	4	1	1	9	11
»	5	1	4	6	11
»	6	4	1	7	12
»	7	5	—	6	11
»	8	8	4	27	39
»	9	3	8	15	28
»	10	4	6	19	29
»	11	8	14	13	35
»	12	6	9	8	23
»	13	6	4	19	29
»	14	12	11	22	45
»	15	6	17	24	47
»	16	10	14	17	41
»	17	9	5	24	38
»	18	8	17	21	46
»	19	9	13	15	37
»	20	10	12	13	35
»	21	4	8	15	27
»	22	9	9	17	35
»	23	8	4	15	27
»	24	7	9	21	37
»	25	18	17	25	60
»	26	8	15	19	42
»	27	15	12	24	51
»	28	8	11	17	36
Ընդհան. գումարը		193	237	437	867

Ամենից առաջ աչքի են ընկնում վերոյիշեալ աղիւսակի մէջ մահացութեան դէպքերի քրոնիկական ընթացքի թոյլ առաջադիմութիւնը և զգալի տատանումները։ Յուլիսի 28-ից մինչև օգոստոսի 14-ը, աւելի քան կէս ամսվայ ընթացքում, տղամարդկանց օրական մահացութիւնը չէ անցել 10-ից. կանանցը չէ անցել նոյն քանակից մինչև օգոստոսի 11-ը, երեխաներինը՝ մինչև օգոստոսի 8-ը։ Երեք կաթեգորիաների մահացումների ամման այդ տարբեր տեմպը պահպանվում է ամբողջ ամսվայ ընթացքում և տալիս իր տարբեր արդիւնքները ամսավերջին։ Մեռած տղամարդկանց թիւը հաւասար է 193-ի, կանանցը՝ 237 հոգու, իսկ երեխաներինը՝ 437 հոգու։ Դա նշանակում է, որ օրական միջին թուով (հաշուելով յուլիսի 28-ից մինչև օգոստոսի 28-ը) մեռել են՝ տղամարդկանցից 6 հոգի, կանանցից աւելի քան 7 հոգի, իսկ երեխաներից մօտ 14 հոգի, ասել է՝ երկու անգամ աւելի։ Իսկ բոլոր կաթեգորիաներից միասին մեռել են օրական 27 հոգի։ Այստեղ պէտք է շեշտել, որ երեխաները ասելով չը պիտի հասկանալ բոլորովին փոքրիկ մանուկներ, այլ մինչև 12—13 տարեկան հասակը։ 14—15 տարեկանից սկսած արդէն հաշուված են մեր մահացուցակում տղամարդկանց շարքում և այդպիսիները համեմատաբար քիչ են մեռնում։ Տղամարդկանց մահացութեան ամենամեծ թիւը հասել է 18-ի (օգոստոսի 25-ին), կանանցը՝ 17-ի (օգոստոսի 22-ին), իսկ երեխաներինը՝ 27-ի (օգոստոսի 8-ին)։ Նշանակում է՝ նոյն իսկ ժամանակագրական կարգով մահվան դէպքերի աճման պրոցեսի արագութիւնը երեխաների մօտ աւելի վաղ է սկսվել, քան երկսեռ հասակաւորների։

Այժմ ուշադրութիւն դարձրէք էջմիածնի և Երևանի փախստականների մահացութեան դէպքերի թուական մեծութիւնների վրա։ Տարբերութիւնները շատ խոշոր են բոլոր կողմերից վերցրած, ինչպէս ցոյց են տալիս հետևեալ յարաբերական թուերը։ Այսպէս, օրինակ, մինչև օգոստոսի 15-ը Երևանի և էջմիածնի (վանքինը և գիւղինը միասին վերցրած) փախստականների ընդհանուր քանակների տոկոսական յարաբերութիւնը եղել է՝ 38,46% : 61,54%, մինչդեռ նոյն բոլոր տեղերում և մինչև նոյն ամսաթիւը եղած մահվան դէպքերի յարաբերութիւնը եղել է՝ 14% : 86%։ Լաւ նայեցէք. փախստականների ընդհանուր քանակի 38,46% ունեցող Երևանը մասնակցել է մահացութեան դէպքերին միայն 14%-ով։ Սակայն էջմիածնի փախստականների դրութիւնը էլ աւելի տխրաստ է դառնում օգոստոսի երկրորդ կիսից սկսած, չը նայելով որ այդ շրջանում մահացուցակը վերաբերում է միայն վանքի փախստականներին, այսինքն վերջիններիս աւելի նուազ թուի։ Օգոստոսի 15—28-ի շրջանում Երևանի և էջմիածնի տոկոսական յարաբերութիւնը՝ փախստականների թուի նկատմամբ՝ եղել է 42,55% : 57,45%, մինչդեռ մահվան դէպքերինը եղել է՝ 17% : 83%։ Փախստականների թուի 42,55% ունեցող Երևանը տուել է միայն 17% մահվան դէպքերի, իսկ էջմիածինը իր 57,45% փախստականներով մասնակցել է մահացութեան դէպքերին 83%-ով։

Էլ աւելի շոշափելի դարձնելու համար ընթերցողներին մեր արած համեմատութիւնները, աւելացնենք, որ առաջին շրջանում (յուլիսի 28-ից մինչև օգոստոսի 15-ը) էջմիածնում խմբված փախստականներից իւրաքանչիւր 1000-ին գալիս էին 60 մահվան դէպքեր, մինչդեռ Երևանում 1000-ին գալիս էին 15 մահվան դէպքեր, ասել է՝ չորս անգամ աւելի քիչ։ Մինչդեռ երկրորդ շրջանում (օգոստոսի 15—28-ը) այդ յարաբերութիւնը փոխվում է էլ աւելի ահռելաստ էջմիածնի. այստեղ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

16 սեպտեմբերի

ՊԵՏՐՈԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Ֆրիդրիխշտադից դէպի հիւսիս-արևմուտք գերմանացիք ապարդիւն տեղը յարձակում գործեցին Լիգգեր և Զուկլ գիւղերի վրա, յարձակումը վանվեց։

Դվինսկի մօտ շարունակ թնդանօթաձգութիւն է։ Գերմանացիների յարձակումները Գիտէնի-Սվէնիէն զօրաճակատի վրա վանվում են։ Կռիւները շարունակվում են։ Մի քանի մասը ընդհարումներ տեղի ունեցան Կօզեանի գիւղի մօտ։

Կրէվոյից դէպի հիւսիս և Օշմեանից դէպի հարաւ-արևելք հակառակորդը եռանդով յարձակում գործեց և մի փոքր ետ մղեց մեր զօրքերին։

Պրիպեատայից դէպի հարաւ հակառակորդը մի քանի անգամ յարձակում գործեց Զարտորիյսկի վրա և սկզբում բոլոր յարձակումները վանվեցին, բայց հակառակորդին ուղարկված օգնական զօրքերի շնորհիւ աջողվեց այստեղ մեզ ետ մղել դէպի Ստիրի աջ ափը։

Նոյմ Օլեկսինեց գիւղը ենթարկվեց հակառակորդի յարձակման երեք անգամ մրրկային թնդանօթային կրակով։ Ամեն անգամ թշնամին ետ էր շպրտվում մեր թնդանօթային շեշտակի կրակից և հրացանաձգութիւնից։

Սարիպա գետի մօտ, Կուպչինցէ գիւղից ոչ հեռու—Տարնապոլից դէպի արևելք—թնդանօթային կռիւը զարգանում է։ Կատաղի կռուից յետոյ մեր զօրքերը տիրեցին թշնամու խրամատներին և նրա ռազմակետերից մինչև Խոդաչուից դէպի արևմուտք։ Շարունակելով առաջանալ, մեր զօրքերը ուժեղ հրացանաձգութիւնից յետոյ նետվեցին յարձակման և, յաղթահարելով խութերին, ձեռք ձգեցին թշնամու խրամատները Կուպչինցէ գիւղից դէպի արևելք։

ԳՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—

(Պետ. Հեռ. Գործ.)

16 սեպտեմբերի

ՊԱՐԻԶ.—Ցերեկվայ պաշտօնական հաղորդագրութիւն.

Ստացվող տեղեկութիւնները հնարաւորութիւն են տալիս օր-աւուր աւելի գնահատել մեր առաջխաղացման աջողութեան կարևորութիւնը Շամպանիում, որպիսի առաջխաղացումը համակերպված է դաշնակիցների առաջխաղացման հետ։ Արտաւոյում գերմանացիք ստիպված էին ոչ միայն թողնել երկար զօրաճակատով չափազանց ամրացված դիրքեր, այլ նրանք կրեցին կորուստներ, որոնց ընդհանուր թիւը սպանվածներով, վիրաւորվածներով ու գերի ընկածներով երեք զօրաբանակից անցնում է։ Թիկունքը տարված թնդանօթների թիւն է 79. Շաբաթի վրայով անցել են 17,088 գերի զինուոր և 316 օֆիցէր. գերիների ընդհանուր թիւը հասել է 38 փախստականներ
Ղարաքիլիսա . . 10 »
Ալէքսանդրոպոլ . 1688 »
Ղամարլուի շրջան 2439 »
Դաւալուի » 102 »
Բալլեանի » 575 »
Թալագիւղի » 323 »
Փարաքարի » 428 »
Աշտարակի շրջ. և
Եղուարդ » 87 »
Քանաքեռի » 2033 »
Ախտա (Բայազ. գ.) 18161 »
Արտաշատի շրջան 1156 »
Դիլիջան . . . . 2491 »
Ընդամենը՝ 29531 »
Նշանակում է Երևանը ընդունել է աւելի քան 50,000 փախստականներ (այդ թուի մէջ մտնում են նաև նրանք, որոնք Վանի երկրորդ գրաւումից յետոյ հայրենիք են վերադարձել Երևանից), որոնց մեծ մասին՝ (29,531+հայրենիք վերադարձածները) ցրել է նա դէպի զանազան վայրեր, իսկ քաղաքում ապաստանած շուրջ 20 հազար փախստականներից մինչև սեպտեմբերի 6-ը մնացել են 18,848 հոգի. պակասը պիտի բացատրել գլխաւորապէս մահացութեան դէպքերով, ինչպէս կը տեսնենք մենք ստորև։
Մի բան, որ պիտի արձանագրել իբրև մխիթարական փաստ, այն է, որ Երևանում խմբված փախստականների մէջ մահվան դէպքերը անհամեմատ փոքրաթիւ են, ի նկատի ունենալով էջմիածնի օրինակը։ Հետևեալ հետաքրքրական աղիւսակը ցոյց է տալիս, թէ ինչպէս են աճել և ինչ ընդհանուր թիւ են տուել Երևանի փախստականները (տղամարդկանց, կանանց և երեխաների, առանձին-առանձին) մահացութեան դէպքերը մի ամբողջ ընթացքում։ Մենք բերում ենք ստորև միայն էջմիածնի մահացուցակի ժամանակամիջոցը, որպէս զի շաբաթվայ և դիւրին լինեն համեմատութիւնները էջմիածնի և Երևանի մահացութեան դէպքերի։
Երևանի փախստականների մահացուցակը (յուլիսի 28 ից մինչև օգոստոսի 28-ը)։
Ամսաթիւ | Տղամարդիկ | Կանայք | Երեխաներ | Բոլորը միասին
Յուլիսի 28 | 1 | 2 | — | 3
» 29 | 1 | 1 | 2 | 4
» 30 | 1 | 2 | — | 3
» 31 | — | 1 | 3 | 4
Օգոստոսի 1 | 1 | — | 2 | 3
» 2 | 3 | 3 | 5 | 11
» 3 | — | 3 | 7 | 10
» 4 | 1 | 1 | 9 | 11
» 5 | 1 | 4 | 6 | 11
» 6 | 4 | 1 | 7 | 12
» 7 | 5 | — | 6 | 11
» 8 | 8 | 4 | 27 | 39
» 9 | 3 | 8 | 15 | 28
» 10 | 4 | 6 | 19 | 29
» 11 | 8 | 14 | 13 | 35
» 12 | 6 | 9 | 8 | 23
» 13 | 6 | 4 | 19 | 29
» 14 | 12 | 11 | 22 | 45
» 15 | 6 | 17 | 24 | 47
» 16 | 10 | 14 | 17 | 41
» 17 | 9 | 5 | 24 | 38
» 18 | 8 | 17 | 21 | 46
» 19 | 9 | 13 | 15 | 37
» 20 | 10 | 12 | 13 | 35
» 21 | 4 | 8 | 15 | 27
» 22 | 9 | 9 | 17 | 35
» 23 | 8 | 4 | 15 | 27
» 24 | 7 | 9 | 21 | 37
» 25 | 18 | 17 | 25 | 60
» 26 | 8 | 15 | 19 | 42
» 27 | 15 | 12 | 24 | 51
» 28 | 8 | 11 | 17 | 36
Ընդհան. գումարը | 193 | 237 | 437 | 867
Ամենից առաջ աչքի են ընկնում վերոյիշեալ աղիւսակի մէջ մահացութեան դէպքերի քրոնիկական ընթացքի թոյլ առաջադիմութիւնը և զգալի տատանումները։ Յուլիսի 28-ից մինչև օգոստոսի 14-ը, աւելի քան կէս ամսվայ ընթացքում, տղամարդկանց օրական մահացութիւնը չէ անցել 10-ից. կանանցը չէ անցել նոյն քանակից մինչև օգոստոսի 11-ը, երեխաներինը՝ մինչև օգոստոսի 8-ը։ Երեք կաթեգորիաների մահացումների ամման այդ տարբեր տեմպը պահպանվում է ամբողջ ամսվայ ընթացքում և տալիս իր տարբեր արդիւնքները ամսավերջին։ Մեռած տղամարդկանց թիւը հաւասար է 193-ի, կանանցը՝ 237 հոգու, իսկ երեխաներինը՝ 437 հոգու։ Դա նշանակում է, որ օրական միջին թուով (հաշուելով յուլիսի 28-ից մինչև օգոստոսի 28-ը) մեռել են՝ տղամարդկանցից 6 հոգի, կանանցից աւելի քան 7 հոգի, իսկ երեխաներից մօտ 14 հոգի, ասել է՝ երկու անգամ աւելի։ Իսկ բոլոր կաթեգորիաներից միասին մեռել են օրական 27 հոգի։ Այստեղ պէտք է շեշտել, որ երեխաներ ասելով չը պիտի հասկանալ բոլորովին փոքրիկ մանուկներ, այլ մինչև 12—13 տարեկան հասակը։ 14—15 տարեկանից սկսած արդէն հաշուված են մեր մահացուցակում տղամարդկանց շարքում և այդպիսիները համեմատաբար քիչ են մեռնում։ Տղամարդկանց մահացութեան ամենամեծ թիւը հասել է 18-ի (օգոստոսի 25-ին), կանանցը՝ 17-ի (օգոստոսի 22-ին), իսկ երեխաներինը՝ 27-ի (օգոստոսի 8-ին)։ Նշանակում է՝ նոյն իսկ ժամանակագրական կարգով մահվան դէպքերի աճման պրոցեսի արագութիւնը երեխաների մօտ աւելի վաղ է սկսվել, քան երկսեռ հասակաւորների։
Այժմ ուշադրութիւն դարձրէք էջմիածնի և Երևանի փախստականների մահացութեան դէպքերի թուական մեծութիւնների վրա։ Տարբերութիւնները շատ խոշոր են բոլոր

նուր թիւը այժմ 23,000-ից անց է։ Աստիճանաբար կուբ դաշտը մաքրվում է և ցուցակագրվում են զանազան զէնքեր և ռազմական իրեր։

Սուշէից դէպի արևելք մենք երէկ յամառ կուիւ յետոյ հասանք «140» դիրքին։ Այդ կուռում մենք վերցրինք 300 գերի։

Կռիւը Շամպանիում շարունակվում է անդադար ամբողջ զօրաճակատի վրա։ Երեկոյեան գերի ընկածների թիւը այսօր հասաւ 1000-ի։

Թշնամին կատաղի ռմբակոծութեան ենթարկեց Էն գետի հիւսիսում մեր խրամատները։ մենք եռանդով պատասխանում էինք։

ԼՕՆԴՈՆ.—Ֆելդմարշալ Ֆրէնչը տեղեկացնում է.

Տաք կռիւը շարունակվեց Լոսի շուրջ և նրանից դէպի հիւսիս։ Մենք առաջացանք Լոսից դէպի հարաւ և ձեռք ձգեցինք կրկին մի թնդանոթ, որով մինչև օրս ձեռք ձգած կանոնները 21 թնդանոթ։ Գերիների թիւը 3000-ից անցնում է։ Մենք ձեռք ենք ձգել 40 գնդակոցիր, բացի դրանից ռմբակոծութեան ժամանակ օչնչացվել են մեծ քանակութեամբ դնդակոցիր։ Մեր գրաւած թշնամու զօրագիծը չափազանց ուժեղ էր և կազմում էր կրկնակի զօրաճակատ, որի վրա գտնվում էին «Հոհենցոլլերն» և «Վիլհելմ կայսր» դաշտային մեծ ամրութիւնները։ Այժմ մենք մօտեցել ենք թշնամու երրորդ զօրագծին։

Այսօր մեր աէրոպլանները ռմբակոծեցին երկաթուղագիծը Բաթի մօտ և խորտակեցին մի գնացք, նաև փչացրին երկաթուղագիծը Աշվիլեզրանի մօտ։

ՊԱՐԻԶ.—Երէկ ցերեկով մեր զօրքերը շարունակեցին քայլ առ քայլ առաջանալ Սուշէից դէպի արևելք ընկած լեռնաշղթաներով։ գերեցինք մօտ 100 մարդ, որոնց թւումն են գվարդիայի զինուորներ, եկած մի քանի օր առաջ ռուսական զօրաճակատից։

Մենք նոր աջողութիւն ունեցանք նաև Շամպանիում, մասնաւորապէս Մասիժից դէպի հիւսիս, ուր մենք ձեռք ձգեցինք կրկին 800 գերի։

Թշնամին կատաղի ռմբակոծութեան ենթարկեց մեր խրամատները Արգոնները, որին մենք եռանդով պատասխանում էինք։ Ձեռքի ռումբերը գործադրելով՝ մենք կուռվ կարողացանք նորից տիրել մեր առաջին զօրագծի այն մի քանի դիրքերին, որոնց մէջ պաշտպանվում էր թշնամին երէկվանից։

Լեպրէզերի անտառում թնդանօթային կռիւ է։

ԱՒՍՏՐՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
16 սեպտեմբերի

ՀՌՕՄ.—Պաշտօնական հաղորդագրութիւն. Զեվեդալէ շրջանում թշնամին փորձեց նորից յարձակում գործել Կապանէլլէի ուղղութեամբ, բայց մեր զօրքերի արիւն հակազդեցութիւնը ի դերև հանեց նրա ջանքերը։

Կարնիոյում և Ռուսիում թշնամու առաջխաղացումներն աջողութեամբ վանվեցին։ Թշնամու թնդանօթներն արձակեցին մի քանի բռնկվող ռումբեր Մոնֆալկոնէի, Մանդրիայի և Անդրիայի վրա, սակայն, շնորհիւ մեր հրետանիների արագ ու կանոնաւոր միջամտութեան՝ թշնամու կրակը դադարեց։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
16 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Երէկ երեկոյեան Գերագոյն Զօրահրամանատարի կայանը մեկնեցին մինիստրների խորհրդի անդամները ամբողջ կազմով։

ԼՕՆԴՈՆ.—Հասարակական աշխատանքների մինիստր Գարկուրը ճաշ տուեց ի պատիւ մինիստր Բարկի։ Ճաշին նախագահում էր Մակկէնան։

Համայնքների պալատում Մակնամարան ուղղված հարցին պատասխանեց, որ Բալտիկ ծովում գտնվող բրիտանական ռազմանաւերն ենթարկվում են ռուսական գերագոյն զօրահրամանատարին, հետևաբար նա կարող է որոշել՝ թէ ինչ կարելի է հաղորդել այդ նաւերի գործողութիւնների մասին, և ինչ՝ ոչ։

Բանւորական կոմիտէների ներկայացուցիչների կոնֆերէնցիայում ճառեր արտասանեցին ի թիւս այլոց Կիրշենները և Ակվիթը պատերազմաբեմում տիրող դրութեան մասին։

ՆԻՒ-ԵՕՐԿ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ 500 միլիոն դոլլարի անգլիական փոխառութիւնը կառաջարկվի ամերիկեան հանրապետութեան ըստ կուրսի 98. փոխառութեան օբլիգացիաները կարող են յետգնվել 5 տարուց յետոյ։

ՎԱՇԻՆԳՏՈՆ. — Մրենխէնի ամերիկեան դեսպան Հէֆֆիին առաջարկված է հրաժարական տալ գերմանասիրական զգացմունքներ արտայայտելու համար. եթէ նա մերժէ, այն դէպքում կարձակվի։

ՍՏՕԿՀՈԼՄ.—Մրենխէնից հաղորդում են «Մրենխենէր-Պոստը» տեղեկացնում է, որ պապը կոչ է պատրաստում յանուն մեծ պետութիւնների, յորդորելով նրանց իսէր կրօնի և մարդասիրութեան զինադադար յայտարարել բոլոր նահատակների յիշատակի օրը, նոյեմբերի 2-ին ն. տ.

Գերմանական պահանջական կուսակցութեան բիւրոյի նիստում ընդունվել է մի բանաձև, որ ազդարարում է թէ՝ պատերազմի նպատակն է լիակատար պարտութեան հասցնել Անգլիային բոլոր հնարաւոր միջոցներով։

Ստացված տեղեկութիւնների համաձայն, Ֆրանս—անգլիական արշաւանքի աջողութիւնը մեծ յուզմունք է մացրել գերմանական ազգաբնակութեան մէջ։ Գերմանական մամուլը աշխատում է թուլացնել աջողութեան նշանակութիւնը։

ՊԱՐԻԶ.— Գեներալ Մարշանը ծանր վիրաւորվել է։ Ցայս կայ սակայն, որ նրա կեանքը փրկեն։ Պուանկարէն շնորհեց պատուաւոր լեգէոնի օֆիցէրական մեծ աստղ։

Թագաւոր Կայսրը դիմեց նախագահ Պուանկարէին հետևեալ հեռագրով.

Ստանալով տեղեկութիւն ֆրանսիական պանծալի զօրքի տարած յաղթութեան մասին, ես գոհունակութեամբ առիթից օգտվում եմ մատուցանելու ձեզ, նաև ֆրանսիական քաջարի զօրքին իմ ամենաջերմ բարեմախթութիւնները և անկեղծօրէն ցանկանալու. Ֆրանսիային բարեկեցութիւն։

Պուանկարէն պատասխանեց հետևեալ հեռագրով. «Շնորհակալ եմ Ձերդ Մեծութիւնից շնորհաւորելու համար այն գեղեցիկ աջողութեան առիթով, որ մեր զօրքերը դաշնակիցների աջակցութեամբ տարան ընդհանուր թշնամու դէմ։ Ես նոյնպէս խնդրում եմ Ձերդ Մեծութիւնից ընդունել իմ ամենաջերմ շնորհաւորանքները— այն աչքի ընկնող քաջութեան առիթով, որ հանդէս բերան են հանում ռուս զօրքերը առ ի զարմանս հանուր աշխարհի. Պուանկարէ»։

ԲՈԼԳԱՐԻԱՆ, ՅՈՒՆԱՍՏԱՆԸ ԵՒ ՌՈՒՄԻՆԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)
16 սեպտեմբերի

ԱԹԷՆՔ.—Ստոյգ աղբիւրից տեղեկացնում են, որ յունական սահմանագլխում կենտրօնացած բոլգարական զօրքի թիւը 65000 մարդուց չէ անցնում. Հաղորդում են, որ երևացել են թնդանօթաձիգ վաշտեր և կառուցվում են դաշտային ամրութիւններ։ Դեղէագաչի ամրութիւնները աւարտված են. նաւահանգստի առաջ ձգված են երեք կարգ ականներ. քաղաքի մօտի գագաթները ամրացրված են երեք շարք խրամատներով։

ՍՏՕԿՀՈԼՄ.—Գերմանական մամուլը յունական զօրահանութեան տեղեկութիւնը ընդունեց աւելի զսպված, քան Բոլգարիայի արած յայտարարութիւնը՝ իր զօրահանութեան մասին։ Գերմանական պաշտօնական յօդուածներից կարելի է այն եզրակացութիւնն անել, թէ Գերմանիան ձգտում է ամէն կերպ համաձայնութիւն հաստատել Բոլգարիայի և Յունաստանի միջև այն հիմունքներով, որ Բոլգարիան կրճատէ իր պահանջները և պարզորոշ յայտարարէ, թէ իր զօրահանութիւնն ուղղված է ոսկ Սերբիայի դէմ։

ՍՕՖԻԱ. — Այստեղ նկատվում է խուլ դժգոհութիւն զօրահանութեան դէմ, որ ընթանում է չափազանց անպատշաճ պայմաններում։ Բացի դրանից՝ զօրահանութիւնը Յունաստանում, ապացուցանելով Ֆերդինանդ արքային և նրա կառավարութեանը՝ թէ նրանք ընթացել են վտանգաւոր ճանապարհով, դնում է նրանց դժուարին կացութեան մէջ։

ԼՕՆԴՈՆ.—Համայնքների պալատում արտասանած ճառի մէջ Գրէյը յայտնեց. «Մինչև Բոլգարիան չը կանգնէ Մեծ Բրիտանիայի և նրա դաշնակիցների թշնամիների կողմը, խօսք անդամ չէ կարող լինել բրիտանական ազդեցութիւն կամ այժ գործադրելու մասին՝ բոլգարական շահերին թշնամական մտքով։ Իսկ եթէ բոլգարական զօրահանութեանը հետևէ Բոլգարիայի հանդէս գալը մեր թշնամիների օգտին, այն ժամանակ մենք պատրաստ ենք աջակցել մեր բարեկամներին Բալկաններում աւելի ցանկալի ձևով և մեր դաշնակիցների հետ համամիտ»։

ՍՏՕԿՀՈԼՄ.— «Ֆրանկ. Ցայտ.»-ը հաղորդում է է, որ բոլգարական արքան դիմեց յունաց թագաւորին հեռագրով, որի մէջ մատնանշում է, որ բոլգարական զօրահանութիւնը օտար է ագրեսիվ մտադրութիւններից յունական երկրի դէմ և որ Բոլգարիան արամադրված է նպաստելու երկու երկիրների բարի յարաբերութիւնների գարգացմանը։ Գերմանական մամուլը այդ առիթով մատնանշում է, որ այդ հեռագրով բոլգարական արքան առաջին քայլն արաւ վերականգնելու համար բալկանեան երկրորդ պատերազմի ժամանակից բոլգար արքայի և յունաց թագաւորի անձնական խզված յարաբերութիւնները։

ՊԱՐԻԶ.—«Matin»-ի ասելով, թիւրքբոլգարական համաձայնութիւնը ստորագրվեց Դէմոտիկում միայն նրանից յետոյ, երբ Սոֆիայի փողոցների աները պատերին փակցվեց զօրահանութեան հրամանը։ Թիւրք պատգամաւորները հրաժարվեցին պայմանագիրը ստորագրել մինչև այդ հրամանի երևալը։ Երկաթուղագծի յանձնումը տեղի կունենայ սեպտ. 23-ին, զօրահանութիւնը վերջանալուց յետոյ։ իսկ ամրացված տեղերի յանձնումը՝ սեպտ. 28-ին, այսինքն այն ժամանակ, երբ Թիւրքիան կը տեսնէ, թէ ինչ է անելու Բոլգարիան իր զինված զօրքը։

ՌՈՒԽԱՐԵՍՏ.—«Ունիվէրսալը» հաղորդում է, որ Բոլգարիայի զօրահանութեան սկզբից 800 բոլգար զինուոր ամբողջ սպառազինութեամբ դասալիք եղան Ռումինիա, բերվել են Բուխարեստ և գտնվում են չափազանց ճշնշված տրամադրութեան մէջ։ Նրանք յայտնում են, որ գերադասեցին փախչել, որովհետև շատ լաւ հասկանում են, թէ ո՞ւմ դէմ պէտք է կռուեն։ «Մենք,—ասում են նրանք,—զէնք չենք բարձրացնի Ռուսաստանի դէմ»։

ԱԹԷՆՔ.—Յունաստանի և Բոլգարիայի միջև կայացած համաձայնութեան այժմ առաջապահ ռահմանային պահակազօրը եռ է տարված՝ երկու երկիրների զօրքերի միջև հնարաւոր ընդհարումներից խուսափելու համար։

ՍՕՖԻԱ.—Սեպտ. 13-ին հրաժարական տուին Տօնչեվը և սրա համախոհ Բակալովը։ Այսօր թագաւորի մօտ է կանչված Մալինովը։

(Լրագիրներից)

◆ Բոլգար ուսանողները հրաժարվել են կռուել Ռուսաստանի դէմ։ Մի մասը նրանց մատնում է ռուսաց զօրքի մէջ։

◆ Դիւանագէտների կարծիքով, մօտիկ ապագայում վերջնագիր են ներկայացնելու Գերմանիան, Աւստրիան և Բոլգարիան միասին, պահանջելով թոյլ տալ անցկացնել ռազմամթերք։

◆ Սալոնիկից հաղորդում են, որ Դեդէագաչում գտնվում են գերմանական երեք սուզանաւ գերմանական զինուորական ինժենէրների ղեկավարութեան ներքոյ։ Տենդային կերպով ամրութիւններ են կառուցանվում։

◆ Մալինովը հրաժարվեց ներկայանալ թագաւորին։

◆ Լուրերի համաձայն Վենիզելոսը հրաժարական է տուել։

ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

(Պետ. Հեռ. Գործ.)
16 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Կայսերական պալատի մինիստրի հեռագիրը.

Այսօր, սեպտեմբերի 16-ին, Արքայական կայսրուում, Թագաւոր Կայսրի անձնական նախագահութեամբ, կայացաւ մինիստրների խորհրդի նիստը։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)
16 սեպտեմբերի

ԲՐԻՆԴԻԶԻ.—«Բենէդէտտօ բրին» զրահնաւի վրա հրդեհ ծագեց, որին հետևեց պայթում։ Առայժմ ազատել են 8 օֆիցերի և 379 զինուորի։ Զոհերի թւումն է փոխծովակալ Բուրին դէ-Վերվիլը։ Հրդեհը բացատրվում է պատահականութեամբ։

ՏՕԿԻՕ.—Ֆօրմոզայում մահվան են դատապարտված ապատամբութեան փորձի համար 107 հոգի։

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Գրօֆէսօր Մակովկին կառքով գնալիս էլեքտրաքարշի վագոնի հարուածից ընկաւ կառքից և ստացաւ մի վէրք ու ուղղի ցնցում։

ՊԱՐԻԶ.—Վախճանվեց դրող Բէմի դը Գուրմոնը։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՈՒՐՋԸ

◆ Ռուսաց զինուորական մինիստրութեան մէջ հաց է յարուցված կանչելու օֆիցէրների և ունտէր-օֆիցէրների ատիճաններով կրասեր ուսանողներին։ Բժիշկ-ուսանողները չեն կանչվելու։

◆ «Հ. Ե.»-ն, ողջունելով Բաշտի թիւրքական հիւպատոսի ձերբակալութիւնը, պնդում է, թէ Պարսկաստանի մնացած թիւրք-գերմանական գործակալներին ևս անհրաժեշտ է կալանաւորել։ Այդ բանը կը խափանէ այն խռովութիւնը, որ սպառնում է թէ մեզ և թէ մեր հովանաւորութեան տակ գտնվող պարսիկ ժողովրդին։

◆ Հոլանդական տեղեկութիւնների համաձայն, Վիլհելմը մի կոչով յանուն արևմտեան զօրաճակատում կուող գերման զօրքերի յորդորում է աւելի եռանդուն գործողութիւնների դիմել։

◆ Գերմանական զօրքերը կենտրոնում են Սերբիայի դէմ։

◆ «Ե. Ե.»-ն հաղորդում է, որ այս շաբաթում գործող բանակն է մեկնում գեն. Կուրոպատկինը։

◆ Սինոպի օբէր-պրօկուրոր Սամարինը հեռագրով նորից խնդրել է տալ վանական և եկեղեցապատկան շէնքերը փախստականների համար։

◆ Ամստերդամից տեղեկացնում են, որ սկսվել են գերմանացիների թիկունքային զօրափոխութիւններ, որ նշան է նրանց նահանջման։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՃԱՇԱՐԱՆԻ ՕԳՏԻՆ

Ստացանք 1) Թիֆլիսում, Վասիլիյ Փուղինեանից 10 ր., 2) Ալուպկայից, Յակոբ Յովհաննեանից 5 ր.։

ՅՈՒՅԱԿ

I

Զիրիի հայ նուիրատուների
(Յօդուտ Հայ Նպաստ. Ընկ).
(Տես «Մշակ» № 188)

Ս. Ոսկանեան, Ալ. Յարութիւնեան, Յ. Տէր-Յովհաննեան, Մ. Ոսկանեան 5-ական ր., Ալ. Յակոբեան, Հ. Սարգսեան, Ալ. Առաքելեան, Գր. Բաղդասարեան, Ս. Բաղդասարեան, Ն. Ղահրամեան 3-ական ր., Ս. Օհանեան 1 ր., Աղ. Սագարեան 50 կ.։ Ընդամենը 39 ր. 50 կ., որպիսի գումարից դրամի փոխադրութեան համար ծախսված է 25 կ., և խմբագրութեանը հասցված 39 ր. 25 կ.։

II

Սուխումի նուիրատուների
(Յօդուտ Վանի աղէտեալների)
(Տես «Մշակ» № 188)

Մ. Գաբրիէլեան, Մ. Ներսէսեան, Օ. Աւէքսանեան, Պ. Հովսուգիեան 3-ական ր., Գ. Թալումճեան 2 ր., Յ. Իսրայէլեան, Վ. Օտապաշեան, Ն. Դաւվէճեան, Պ. Մադելեան, Պ. Օքսուզեան, Տ. Գալուստեան, Ա. Գոնդաքչեան, Պ. Բէհեայեան, Յ. Զալուգիեան, Լ. Մալխասեան, Յ. Տէրաէրեան, Հմ. Տէրաէրեան, Յ. Գրիգորեան 1-ական ր., Կ. Տէրաէրեան, Յ. Միքայէլեան, Կ. Հովսուգիեան, Դ. Եթուեան, Օ. Օդմաճեան, Վ. Ռահանեան 50-ական կ., Պ. Կարնցեան, Մ. Մկրտչեան 40-ական կ., Զ. Դաւթեան 30 կ.։ Գումարն է 31 ր. 10 կ., որից 10 կ. դրամի փոխադրութեան է յատկացված, և մնացեալ 31 ր. հասցված է խմբագրութեանս։

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Պետ. Դումայի անդամ Միք. Պապաջանեան Պետրօգրադից հեռագրում է քաղաքների Միութեան Կովկասի ճիւղի լիազօր Ալ. Խատիսեանին. «Պետրօգրադի՝ փախստականներին օգնող հայկական կոմիտէը որոշել է Թիֆլիսում բանալ ապաստարան 200 որբի համար։ Ապաստարանը կազմակերպելու համար լիազօրված են Ասրիբեկեան և Սարգսեան, որոնք 10 օրից յետոյ մեկնելու են։ Խնդրում եմ աջակցութիւն ցոյց տալ նրանց։ Ցանձնարարեցէք հէնց այժմ համապատասխան բնակարան որոնել ձրի կամ 200 ր. ոչ աւելի վարձով ամսական։ Ցանկալի է, որ բնակարանը լինի քաղաքից դուրս»։

—

Էջմիածնից Թիֆլիսի վրայով Աղ-Թաղլեար կայարան մեկնեցին 1000 փախստական, ուր կայ տեսակաւորման կայան։ Ճանապարհին հիւանդացած փախստականները պէտք է վերադարձվեն Թիֆլիս, իսկ մնացածները կուղարկվեն Գանձակ։

—

Խորէն եպիսկոպոսը Էջմիածնից 3000 փախստականների հետ մեկնեց Ալաշկերտի հովիտը, այնտեղի բերքը հաւաքելու, ընտանութիւնները վերականգնելու համար։ Այդ շրջանում, ինչպէս յայտնի է, հանգստութիւն է տիրում։ Հէնց այժմանից փախստականները տեղաւորվելու են այնտեղ։

—

Թիֆլիսի քաղաքապետ Ալ. Խատիսեան Մոսկվայից ստացել է հետևեալ հեռագիրը Յ. Ա. Մանթաշեանից. «Ճանկանալով օգնութեան հասնել փախստական-հայերին, թոյլ եմ տալիս ինձ անհանգստացնել և խնդրել ձեզ Թիֆլիսի մեր գրասենեակից՝ Գ. Շահումեանից ստանալ իմ փոխադրած 25,000 ռուբլին և գործադրել ըստ ձեր հայեցողութեան մեր անտուն հայրենակիցների անյետաձգելի կարիքների համար»։

—

Նոր-Բայազէտ, 10 սեպտեմբերի

Փախստական հիւանդներին զատելու և աւելի լաւ խնամելու համար՝ Քաղաքների Միութեան կովկասեան ճիւղը տեղումս հիւանդանոց հիմնեց։ Անցեալ շաբթին Երևանի քաղաքապետ Ս. Խաչատրեան և Ս. Տէր-Մարտիրոսեան, իբրև լիազօրներ, տեղս գալով ձեռնարկեցին հիւանդանոցի բացման ծրագրին՝ 50 հոգու համար։ Նոր-Բայազէտի քաղաքային վարչութիւնը դումայի շէնքը—մօտ 10 կուռ—զիջեց հիւանդանոցին։ Գործակալ Ռուբէն վ.-ի բնակարանում կայացած ժողովում ընտրվեց մի տեղական մասնաժողով, որ պէտք է վարէ հիւանդանոցի գործերը։ Իսկոյն հեռագրվեց դրամական միջոցներ հասցնելու համար՝ գործը շուտով սկսելու։ Կարասիներ և այլ պարագաներ—ինվենտար — բաժանվեցին երկու մասի, այն է՝ ինչ որ կարելի է ձեռք բերել տեղումս, մնացեալը Քաղ. Միութեան միջոցով ստանալ։ Տեղիս մասնաժողովի կազմը բաղկացած է 5 հոգուց, այն է՝ քաղ. աւագ Պ. Արծրունի, բժ. Խ. Մնացականեան, Ս. Բաթիկեան, Վ. Աֆրիկեան և Հ. Մալաքեան։

Որոշվեց նաև մի ֆելդշերական կէտ հիմնել Ղարանլուղում, որ ընկած է Նոր-Բայազէտի և Բազար-Գէչարի մէջտեղ, քաղաքից 30 վերստի վրա, ուր փախստականների բժշկական և սանիտարական գործը անմիջապէս դրութեան մէջ է։

Ինչպէս գիտեն «Մշակի» ընթերցողները, մեզանում նախապէս որոշված էր 6000 հոգի փախստականներ պատսպարել. այն ինչ այժմ նրանց թիւը մօտենում է 15,000-ի։ Հէնց այսօր, երբ այս տողերը գրում եմ, եկան նորանոր փախստականների խմբեր՝ մօտ 1500 հոգի, մի մասը իրանց սայլերով, լծկաններով, կթաններով... Բայց դրանց՝ կարգին պատսպարելու հնարաւորութիւն չը կայ։ Գ. Սինանեան

—

Ալէքսանդրոպոլ, 16 սեպտ.

Քաղաքի հիւանդանոցից առողջացածներին զրեթէ մերկ և բոբիկ են ճանապարհ դնում 5—7 ջերմութեան մէջ։ Արդէն 3 օր առաջ տուն գնացածները այսօր նորից եկան դարձան հիւանդանոց։ Բարեգործական ընկերութիւնների և բարերարների լուրջ ուշադրութեան ենք յանձնում խնդիրը։

Խոլերան արդէն իր ժանիքը մխեց մեր քաղաքի փախստականների կուրծքը. ամսիս 10-ին, 11-ին, 12-ին, 13-ին և 14-ին մի-մի մարդ բռնվեց, իսկ 15-ին երկուսը։ Պէտք է լուրջ հսկողութիւն և օգնութիւն Ալէքսանդրոպոլի դպրոցականներին, քանի որ ցրտերն սկսեցին և առոյց է կապում գիշերները։ Ատրպետ

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Ի նկատի ունենալով, որ համաքաղաքային և համազեմստվոյական համագումարները ահագին նշանակութիւն են ստացել, մենք կարևոր ենք համարում տալ այդ համագումարների գործունէութեան ամփոփումը։

***

Համաքաղաքային համագումարը բացվում է Մ. Վ. Զելնոկովի ճառով, որ խօսում է զորքի մատակարարման, փախստականներին խնամելու և վարակիչ հիւանդութիւնների դէմ կռուելու մասին, յետոյ կանգ է առնում հայրենիքին սպառնացող վտանգի վրա։

Այնուհետև խօսում են ներկայացուցիչներ զանազան քաղաքներից, որոնք ամենքն էլ ցանկանում են, որ Պետ. Դուման գումարվի անմիջապէս։

Սիբիրցին ասում է, որ Սարատովը, որտեղից եկել է ինքը, պահանջում է, որ անմիջապէս գումարվի Դուման և ներքին բէֆորմներ լինեն։

Պետրօգրադի ներկայացուցիչ Ֆէօդորովը պահանջում է նոյնը, աւելացնելով որ համագումարը պէտք է հանգստացնի երկիրը և զորքը Դումայի զբաղմունքները վերսկսելու միջոցով։

Խարկովի ներկայացուցիչ Կուզնեցով հաղորդում է Քաղաք. Միութեան Խարկովի

կոմիտէի բեզօլիւցիան՝ Դուման անմիջապէս զումարելու և կառավարութիւնը փոխելու մասին։

Թիֆլիսի ներկայացուցիչ Ա. Բաբեան, մասնակցելով ընդունված բոլոր բեզօլիւցիաների ապարդիւն լինելը, ասում է, որ երկիրը համազգեմտավային և համաքաղաքային համագումարներից սպասում է, որ սրանք անմիջապես մօբիլիզացիայի ենթարկեն ժողովրդական բոլոր ոյժերը։

Նոյն մաքով խօսում են Մալօարխանգելսկի, Տվերի, Աստրախանի, Եկատերինբուրգի ներկայացուցիչները, աւելացնելով, որ ամենից առաջ անհրաժեշտ է ինքնազսպում, երկրորդ՝ շուտափոյթ կերպով իրականացնել Դումայի զումարումը և կառավարութեան նորոգումը։

Նոյնպիսի միտք է յայտնում Ա. Ի. Գուչկովը իր ճառում, իսկ Պետ. Դումայի անդամ Շենգարեովը հայրենասիրական մեծ ազնուութեամբ արտասանում է մի ճառ, որի մէջ անց է կացնում այն հիմնական միտքը, թէ համագումարը երկրի քաղաքական հասունութեան կենդանի վկան է հանդիսանում, որը պատրաստ է պաշտպանել Դուման։

Շենգարեովին ասում է.

— Պարոնայք, պատերազմը իրանց անուրից դուրս քաշեց մեր համաքաղաքացիների մեծամեծ խմբերը։ Ամենուրեք հրդեհի բոցեր են բարձրանում, ճանապարհները ծածկված են երեխաների և ծերերի դիակներով, անտուն մարդիկ..... Այս ծանր, սարսափելի օրերին ուղում են ողջոյնի և համակրութեան խօսք ասել հարիւրաւոր և միլիոնաւոր մեր համաքաղաքացի ընկերներին։ Ի հարկէ, պարոնայք, մեր խօսքը նրանց արիւնի տեղը չի բռնի, յարութիւն չի պարգևի ընկածներին..... Այս սարսափելի պատերազմը առաջին հերթին քարուքանդ արեց և աւերեց Լեհաստանը։ Բալթիկ լիճեր եկան մեզ մօտ։ Պատերազմը հիւսիս-արևմուտք շրջանից անցաւ Մերձբալտեան շրջանը, Բելօրուսիան, Ուկրայնան, Լիտվան և լիտվացիները, հրէաները, բելօրուսները, ուկրայնցիները գալիս են մեզ մօտ, մեր ռուսական հին նահանգները..... Համագումարի անունից սենք նրանց, պարոնայք։

— Մենք կաշխատենք ապաստան տալ ձեզ, մենք կաշխատենք տեղաւորել ձեզ։ Մենք հասկանում ենք, մենք գիտենք, որ դուք ձեր գլխին ընդունեցիք թշնամու հարուածները։ Մենք չենք մոռանայ այդ։ Այն օրը, երբ Ռուսաստանը ազատվի օտար ցեղերի արշաւանքից, մենք չենք մոռանայ այդ։ այն ժամանակ մենք կը տանք մեր և պետական և հասարակական միջոցները ձեր հրդեհված տները նորից վերականգնելու։ մենք կաշխատենք բոլոր ոյժերով ձեր հին հայրենիքում կեանք ստեղծելու։ Մենք գիտենք, որ դուք կը կատարէք մեր ընդհանուր մեծ և անհրաժեշտ պարտքը։ Ցարդանք և օղջոյն ձեզ, մեծ տանջվածներ և տեղ պատերազմի առաջին զոհեր։ Հաւատացէք, որ պատերազմից յետոյ մենք ձեզ հետ միասին կը ձեռնարկենք վերականգնելու այն ամենը, ինչ կորցրել էք դուք։

Շենգարեովին ճառը ընդունվում է մեծ ազնուութեամբ։ Ամբողջ դահլիճը ծափահարում է։

Դրանից յետոյ համագումարը ընդունում է հետեւեալ որոշումը համագումարի բոլոր հարցերի վերաբերեալ։

Քաղաքների միութեան համագումարի որոշումը

«Ռուսաստանի քաղաքների ներկայացուցիչների համագումարը իր սրբազան պարտքն է համարում ծանր փորձութիւնների բռնկին ջերմ ողջունել մեր կայուն, քաջարի հայրենի բանակին։ Թող իմանայ նա, որ Ռուսաստանի քաղաքացիների բոլոր միտքն ու զգացմունքը ձուլված են յաղթութեան ձգման մէջ և այն բուռն ցանկութեան, որ բոլոր ոյժով օգնենք մեր հերոսներին նրանց վիճակված ծանր պայքարում։ Առաջվայ պէս ռուս ժողովուրդը լցված է վճռականութեամբ՝ պատերազմը հասցնել մինչև իր յաղթական վախճանը, լիակատար միութեամբ մեր հաւատարիմ դաշնակիցների հետ։

«Վերջնական յաղթութեան ճանապարհի վրա ճակատագրական խոչընդոտներ են հանդիսանում մեր պետականութեան դարձեալ նոյն հին արատները՝ իշխանութեան անպատասխանատուութիւնը և երկրից անջատված լինելը։ Անհրաժեշտ է վճռական և ամենաշտապ դէպի նոր ճանապարհ։ Այս է պահանջում հայրենիքի առջև ունեցած պարտքը։

«Ներկայ կառավարութիւնը փոխարինելու պէտք է կոչվեն մարդիկ՝ ժողովրդի վստահութիւնը վայելող։ ժողովրդական ներկայացուցիչների ստեղծագործական աշխատանքը պէտք է վերսկսվի առանց յետաձգելու, իսկ ներքին հաշտութիւնը և հոգեւոր միութիւնը երկրում—սրանք են յաղթութեան կարեւոր պայմանները—պէտք է ապահովվեն հաշտութիւնով և քաղաքական անցած պայքարի մոռացումով ու բոլոր քաղաքացիների օրէնքի առաջ ունեցած հաւասարութեամբ։

«Ռուսաստանի քաղաքների ներկայացուցչութիւնը հայրենիքի ապագայի վերաբերմամբ ունեցած հաստատ հաւատով և կատարեալ ինքնագիտակցութեամբ իր արդարութեան և ազգի ոյժի մէջ՝ ամբողջ երկրի հետ միասին պէտք է շարունակեն անդուլ և միացած աշխատանքը յօգուտ զօրքի, նկատի ունենալով, որ աշխատանքի դադարեցման իւրաքանչիւր ժամը յետաձգում է յաղթութեան հասնելու բոպէն»։

Զեմստվային համագումարի որոշումը

«Ժողովրդական փորձութիւնների ահեղ ժամին մենք, Մոսկվայում հաւաքված նահանգական զեմստվաների լիազօրներս, զեմստվաներ, որ միացած են համառուսական զեմստվային դաշնակցութեան մէջ, անսասան հաւատ ունենք հայրենի բանակի քաջարի ոգու նկատմամբ և հաստատ հաւատում ենք վերջնական յաղթանակին, մինչև որը հաշտութեան մասին չը պէտք է և չէ կարող խօսք լինել։

Ներշնչված մեծ պատասխանատուութեան գիտակցութեամբ հայրենիքի հանդէպ, որը պէտք է միացնի բոլոր ոյժերին, մենք պէտք է լարված շարունակենք և զարգացնենք մեր աշխատանքը յօգուտ զօրաբանակի։ Սակայն համոզված լինելով թշնամուն բոլորովին հեռացնելու հնարաւորութեան մէջ, մենք ապնապով նկատում ենք վրահաս վտանգը ներքին միութեան այն խորտակումից, միութիւն, որը հոչակվեց Գահի բարձունքից, որպէս յաղթութեան հաստատ գրաւական։

«Այդ վտանգը կարելի է վերացնել միայն իշխանութեան նորոգումով, որը կարող է ուժեղ լինել երկրի վստահութեան պայմանով և նրա օրինական ներկայացուցչութեան հետ միասնով։

«Պետական Դումայի անփոխարինելի աշխատանքը պաշտպանութիւնը ուժեղացնելու նկատմամբ՝ յաղթութիւն, արիութիւն և վստահութիւն է ներշնչում ոչ միայն ժողովրդի խորքերում, այլ և զօրաբանակի մէջ։

«Երկրի ցանկութեան համաձայն Պետական Դուման ընդգծեց այն ուղիները, որոնք կարող են Ռուսաստանը դուրս բերել նրան վիճակված փորձութիւնից։

. . . . . .

«Հայրենիքի առաջ ունեցած պատասխանատուութեան գիտակցութեամբ, թող իւրաքանչիւրը մեզնից կրկնապատկի իր ջանքերը, որ անհրաժեշտ են ընդհանուր նպատակին հասնելու՝ յաղթութեան համար, և համերաշխ, լարված աշխատանքում թող պահպանվեն Ռուսաստանին փրկելու համար կարեւոր կարգն ու ինքնագիտակցութիւնը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Նոր Փոխարքայ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչի գալատեան առիթով քաղաքային վարչութիւնը յաղթական բուրգեր է կառուցել տալիս Բարիատինսկայա փողոցի վրա և Վէրայի կամուրջի մօտ։

◆ Սեպտեմբերի 15-ին նոր Փոխարքայի օգնական գնդ. Ն. Ն. Եանուշկեվիչ այցելեց Վրաստանի էքզարխ Պլատրիմ արքեպիսկոպոսին։ Նոյն օրը էքզարխը փոխադարձ այցելութիւն արաւ Ն. Ն. Եանուշկեվիչին։

◆ Քաղ. իրաւաստ Ա. Բաբեան քաղ. վարչութեան ներկայացրել է մի յայտարարութիւն, որ քաղաքը կազմակերպի ձրի թէյարաններ։ Ցայտարարութիւնը, քաղ. վարչութեան եղբակացութեան հետ միասին, ներկայացվելու է դումայի քննութեան։

◆ Քաղ. վարչութիւնը դումային ներկայացնելու է մի զեկուցում, որով անհրաժեշտ է համարվում կանոնաւորել քաղաքին ջուր մատակարարելու գործը։ Ինչպէս յայտնի է, հեռաւոր թաղամասերից մի քանիսում, ցերեկվայ որոշ ժամերին կարվում է ջուրը, որը, ի հարկէ, անպայն դժվարութիւն է առաջացնում անատէրերի և կենցաղների համար։

◆ Վերջին օրերս խօլերայով հիւանդացողների թիւը սկսել է նուազել։ № 40 լաբորէթում մինչև սեպտեմբերի 16-ը խօլերայով հիւանդներ կային 159 հոգի, իսկ կասկածելի՝ 5։

◆ Մինչև սեպտեմբերի 15-ը № 41 լաբորէթում կային բնաւոր տիֆով հիւանդներ 42 հոգի։

◆ Թիֆլիսի կանանց բարձր դասընթացների ընդհանուր պտմութեան (հին դասատու է հրաւիրված Պետրոգրադի բնաստուժվեան կանանց բարձր դասընթացների դասատու տիկ. Ս. Գ. Պրոտասովա։

◆ Այս քանի օր է քաղաքում նաւթ գտնիթէ չը կայ։ Նաւթ ունեցող պահեստատէրերը կամ նաւթավաճառները, իմանալով որ այդ անհրաժեշտ մթերքի քանակը նուազել է, անխղճօրէն նաւթի գինը բարձրացրել են 13 կոպէկի, և այս գինը նրանք վերցնում են գաղանի և քաղ. վարչութեան գործակալներն էլ վերահասու չեն լինում և ժամանակին արձանագրութիւն կազմում այդօրինակ վաճառականների վրա։

◆ Ամսոյ 16-ին, երեկոյեան ժամը 10-ին, երկարատև հիւանդութիւնից յետոյ կնքեց իր մահկանացուն, վաթսունական թւականներին գործող ուսուցիչներից մէկը՝ Գէորգ Դաւթեան Մղիվանանցը։

◆ Հարսնքար գիւղացի գաղթական Վարդերես Սերովբեանի որդի Արութ և եղբօրորդի Արմենակ Սերովբեանները անցեալ յունվարից Սարիղամիշի պատերազմում գերի են ընկել և բերվել Ռուսաստան, սակայն նրանց մասին ոչ մի տեղեկութիւն չը կայ։ Ուստի Վարդերես Սերովբեանը, որ գտնվում է Շնող գիւղում, խնդրում է նրանց մասին տեղեկութիւն ունեցողներից՝ յայտնել լրագրի միջոցով։

—

ԿՈՎԿԱՍ

◆ Հաղորդում են, որ Շուշում կազմվել է քաղաքների միութեան կոմիտէ։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Մոսկվայի քաղաքապետը հրատարակել է պարտադիր որոշում, որի համաձայն փողոցային անկարգութիւնների, ստրիկանութեան գործողութիւնների մէջ միջամտելու և ստրիկանութեան պահանջով դարբասները չը փակելու համար սահմանվում է 3000 ր. տուգանք կամ 3 ամիս բանտարկութիւն։ Հասարակութեան խելամիտ մասին խորհուրդ է տրվում, զոհ տալուց խուսափելու համար, անյապաղ ենթարկվել ստրիկանութեան պահանջներին։

◆ Լարված հետաքրքրութեամբ ռուս հասարակութիւնը և քաղաքական գործիչները սպասում են մինիստրների վերադարձին Արքայական Կայանից, ուր քննվելու էր ներքին քաղաքականութեան հարցեր։

◆ Մոսկվայում, Ստարոնասայա կոչված հրապարակի վրա սեպտ. 14-ի երեկոյեան տեղի են ունեցել անկարգութիւններ։ Քաղաքապետի տեղեկութիւնների համաձայն, սպանվել են 4 և վիրաւորվել են 13 մարդ։

◆ Պետական Դումայի նախագահ Ռոձեանկոն սեպտ. 13-ին ամենահպատակ զեկուցագիր է ուղարկել Թագաւոր Կայսրին։

◆ Պրապորշչիկների դպրոցներում ընդունելութիւնը հասցրված է մինչև 600 մարդու։

ԳԻՏՈՒԹԻՒՆ, ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏ

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովրդական Տուն

Երեքշաբթի, սեպտ. 15-ին, Հայկական Դրամատիկական Խմբակցութիւնը ներկայացրեց «Երեխաներ գողացող կին», դրամա 5 գործ. 8 պատկերով. Նիւթը վերցված է Լօնդոնի արկածախնդիրների և ոճրագործների կեանքից. ուրիշի երեխաները գողացող և ծախող մի կնոջից գողանում են նրա տղիկը, և դրա շուրջը հիւսվում է մի ամբողջ տրագեդիա, լի արկածներով և տանջանքով։ Այս պիէսը կրում էր իր վրա Շերլոկ-Հոլմսեան երկի կնիքը՝ արկածներով առատ և ապրումների խորին վերլուծութիւնից զուրկ։ այս տիպի պիէս տեսնողը լցված ուշադրութեամբ հետեւում է մէկը միւսին յաջորդող սենսացիոն ոճիրներին, բայց երբ վերջանում է ներկայացումը, կորչում է ամբողջ ազդեցութիւնը և միայն մնում է սինեմատոգրաֆային մի շարք պատկերների տպաւորութիւն։ Թատրոնը, ինչպէս և վէպը, նպատակ է ունենալու գեղարուեստական հաճոյք և հոգեկան բաւականութիւն պատճառելու հետ միաժամանակ և որոշ ուղղութեամբ ազդելու հասարակութեան մտածողութեան վրա, վարպետորէն ցոյց տալով սխալը՝ ուղղելու միջոցներ թելադրելու։ Երեխաներ գողացող կինը» պիէսի նման գործերը թէև գուր են գալիս հասարակութեան, բայց նրանք զուրկ են դաստիարակիչ և կրթիչ նշանակութիւնից։

Դերակատարները շնորհքով տարան իրանց դերերը. առանձնապէս շնորհալի էր տ. Յասմիկը։

Դահլիճը ծայրից ծայր լիքն էր։

Ծափերը և սուլոցները անպակաս էին. Ժողովրդական Տանը սուլոցները համազօր են ծափերի... Նրանք դոհունակութեան և հրճուանքի արտայայտութիւն են, երևի...

Գ.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ, 11 սեպտ.

Թաւրիզում խօլերան բաւական զոհեր է տանում թուրքերից. հայերի մէջ ցարդ 10—12 մահացութիւն է պատահել, այն էլ անզգոյշներից։

Մաքերը այժմ խաղաղ են. կարինլարը համակերպվել է դաշնակիցների հետ. Թաւրիզում թուրքերի լեզուները այժմ, նկատելի կերպով, զսպվել են։ Իրազեկ

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3 դէպի Բաթում 1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4 » Բագու 7 ժ. 3 ր. երեկ.
№ 6 (արագ) » 12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9 » Բաթում 8 ժ. 53 ր. երեկ.
» Ջուլֆա 8 ժ. 53 ր. երեկ.
» Բորժոմ 3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3 Բագուից — 12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4 Բաթումից— 5 ժ. 55 ր. երեկ.
№ 5 Բագուից (արագ) 7 ժ. 41 ր. երեկ.
№ 10 Բաթումից— 9 ժ. 51 ր. առաւ.
Ջուլֆայից — 8 ժ. 11 ր. առաւ.
Բորժոմից — 7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Ղաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Գուգիա, Ղօրնեցօվի արձանի հանդէպ)

Սամեն or, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներարկում ըստ շաբաթական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։

Բ. Դ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ցայտնի երեխայոց հիւանդութ. և ծաղիկահատ.։

Մ. Մ. ՌՆԵՆԲԱՒՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։

Ա. Պ. ԳԱՐԱԳԵՏՅԱՆ—12—1 ժ. երեք. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։

ԳԻՆ-Բ.ԾԻԶԻ ՅԵՐ-ԴՈՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԳՈՆՆԵՐԸ

Մ. Մ. ՌՆԵՆԲԱՒՕՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Զրաւոնները ձրի։ Համաձայնորդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Բ. Ղաւասարդեան

1. 0—150

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան. առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեոնովսկայա փող., № 18 (Ղօրնեցօվի արձանի մօտ)։ Բժշկի բնակարան. Սեմեոնովսկայա, № 16.

(չ. ու. կ.) 1018. 100—83

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՊԵՇՅՈՒՅՇԻՉ ԳԻԻՏ

Վերադարձնում է ոյժերը, կայտառութիւնը և տղամարդութիւնը։

Տարիներ շարունակ, ասում է պրոֆ. Ծակ Լերու-Սինօ, կրում էի հոգեկան տանջանքներ. ես ամաչում էի ուրիշ նայել մարդկանց երեսին, թոյլ, հիւծված, կենսական ոյժերս ու սեռական եռանդը վերադարձնելու յոյսս կտրած, ես չէի կարողանում առողջ տղամարդուն վայել գիրք պահել հասարակութեան մէջ ես սկսեցի ճանապարհորդել մի երկրից միւսը, խորհրդակցել յայտնի բժիշկների հետ և փորձել ամեն տեսակ բժշկական սիստեմներ, բայց վերջ ի վերջոյ զգացի, որ քաքայվում եմ հոգեպէս, ֆիզիկապէս ու բարոյապէս և սարսափում էի անձնասպանութեան կամ դժոխոցի մարից։ Բարեբաղդաբար ինձ աջողվեց գնալ Պարիզ, ուր իմ մի բարեկամը բժշկվում էր Ջրայնութիւնից։ Նա խորհուրդ տուեց ընդունել փոսփոր այսինքն զոկա. Գլէզի ՍՏԻՄՈՒԼՈՒՐ։ Ես չը հաւատացի, բայց ուրախեան նա յանդուգն էր և դշանով կրկին վերադարձրել իր առողջութիւնը, ուստի ես էլ որոշեցի փորձել։ Նա վերադարձրեց իմ նախկին կայտառութիւնը և ջղային ոյժը. ներմուծեց արեանս մէջ նոր կեանք և իմ մարմնի բոլոր օրգաններին տուեց եռանդ և երիտասարդական ոյժ։ Մեծ էր իմ ուրախութիւնը, երբ սնօգուտ կերպով չատ հոչակված գեղեր ընդունելուց յետոյ, պատահաբար ծանօթացայ այդ միջոցի հետ և բժշկիցդ։ Այդ բոլորը ինձ աջողվեց ամենահասարակ սիստեմի միջոցով, որը ամեն մէկը կարող է գործածել աննկատելի կերպով։ Իմ ուրախութիւնը մեծ է, և ես որոշեցի իմ բարգաւորութեան գաղտնիքը հաղորդել նոյն ցաւով տառապողներին. դա զօկա. Գլէզի փոսփորն է, այսինքն Սթիմուլոլը, որը թոյլ, ջղային, ընկճված ու սեռական եռանդը կորցրած հաղորդաւոր մարդկանց համար։ Ներկայումս այդ գեղով ես բժշկվում եմ և լաւ հետանդներ հասնում։

Գլիսիկա ջղային և ներքին հիւանդութիւնների զոկա. Ծակ Լերու-Սինօ։

Բոլոր Սթիմուլոլը պատրաստվում է Ֆրանսիայում (Պարիզում), ամեն մի արկղը ունի գործածանի դրոշմը. „Institut D-r Calvet Paris". մի տուփը բաւական է, որ դուք զգաք նրա հրաշալի գործողութիւնը եւ դուք կը ստանաք ձեր ուզածը եռանդը եւ առողջութիւնը. դեղերի հետ ուղարկվում է բոլոր հրաշալան և Ռուսաստանի պրոֆեսորների, բժիշկների, հիւանդների զովասանքները և շնորհակալական նամակները։

Պատուէրները, փողը և նամակները ուղարկել 1) Институтъ Д-ра Кальве, Тифлисъ, Эриванская площ., Пушкинская 3, отд. 11/2, верхній этажъ, д. Кредитнаго О-ва (Խնդրեմ հասցէն գրել լրիւ, ինչպէս որ ռուսերէն գրված է)։ Մէկ տուփը արժէ 7 ռուբ., ճանապարհածախսով և փոստի վճարով 50 կոպ. աւելի արժէ։ Ով ուղարկի 7 ր. փողը առաջուց լրիվին, ճանապարհածախս չի վճարում։ (ու.) 609. 10—3

Սուաւրօպօլի հայոց ծխ. մի դասական երկսեռ դպրոցի համար հարկաւոր է թիմականաւարտ

ՈՒՍՈՒՑԻՉ

շաբաթական 24 դասով, հայոց լեզուից և թուաբանութիւնից։ Ռոճիկ տարեկան մի մարդու 600 բուբլի։ Դիմել՝ Ставрополь губ., Священнику С. Теръ-Овнесьянцу.

651. 2—1

Նոր լոյս տեսաւ

Մ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ

Մեթոդական ժողովածու — Թուաբանական խնդիրների —

II տարի 5-րդ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ.

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին։

(կ.) 650. 2—1

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱՒՈՐ. ՄԻՆԻՍՏՐ. ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՒՈՑ ԳՏՆՎՈՂ

ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ Ն. Ռ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ

(Գոյութիւն ունի 1895 թուից)

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ

Դասընթացքը 4 ամսեայ՝ ամենօրեայ պարապմունքներով։

Մնդիրների ընդունելութիւնը օգոստոսի 25-ից։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատունը—Թիֆլիս, Նիկոլայէվսկայա փողոց, № 22. Տել. № 7—44.

(ե. ու. կ.) 487. 0—19

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՎ ԵՒ **ՀԱՇԻԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ**

ՅՈՎՀ. ԶԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ

Ընդունելութեան քննութիւնները օգոստոսի 24-ից։ Պարապմունքների սկիզբը՝ ուսումնարանում—սեպտեմբերի 1-ից, կուրսերում—սեպտ. 15-ից՝ I Тумановская ул. с. д. № 31

640. 10—4

ԱՌԵՒՏՐԻ ԵՒ ԱՐԴԻՒՆԱՒ. ՄԻՆԻՍՏՐՈՒԹԵԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ՀԻՄՆ. Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ

(Երկու սեռի համար)

Թիֆլիս, Միքայէլեան պրոսպ., № 24.

Խնդիրների ընդունելութիւնը ամեն օր 10—12 ժ. առ., ժ. 5—7 երեկ.։

Զբաղմունքները կը սկսվեն սեպտեմբերի 21-ից։

Տեղեկութիւններ տրվում և ուղարկվում են ձրիաբար։

(չ. ու. շ.) 589. 0—9

Վաճառվում են բոլոր յայտնի գրավաճառանոցներում

Թ. ԽԶՄԱԼԵԱՆԻ եւ Գ. ՄԻՐՔԱՅԷԼԵԱՆԻ կազմած

ԿԱՅԾԵՐ

մայրենի լեզուի I, II, III և IV տարիները բարեփոխված ու ճոխացրած ընտիր յօդուածներով և շարադրական պատկերներով։ Թուղթն ընտիր է, տպագրութիւնը մաքուր։ Գնները I տարի—25 կ., II տ.—40 կ., III տ.—50 կ., IV տ.—70 կ.։

Գումարով գնողներին զգալի զեղչ։

Մեր հասցէն՝ Александрополь учителю Геворку Микаельяну.

(ս. մ.) 638. 3—3

ԱՐՇԱԿ ԶԻԼԻՆԿԱՐԵԱՆԻ, ՏԻԳՐԱՆ ՌԱՇՄԱՃԵԱՆԻ և ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ կազմած

ԴԱՍԸՆԿԵՐ

Առաջին տարի այբբենարան-ընթերցարան		վեցերորդ տիպ . . .	40 կ.
Երկրորդ տարի		վեցերորդ տիպ անփոփոխ	50 կ.
Երրորդ տարի		հինգերորդ տիպ ամփոփոխ .	60 կ.
Չորրորդ տարի		. . . . .	70 կ.

Այբբենարանն ամբողջովին ձեռագիր. բոլոր տարիներում կան արտագրութեան համար ձեռագիր օրինակներ և զրուցատրական, շարադրական ու պարզ գծերով նկարչական պատկերներ։

Դասընկերն Օդեսայի ուսումնարանական շրջանի հոգաբարձական խորհրդի կողմից թոյլատրված է որպէս դասագիրք։

Ցանկացողները դիմեն Թիֆլիս—«Դիր» գրավաճառանոցին, Երևան՝ «Արարատ» և Յովհաննիսեան գրախանութներին, կամ հեղինակներին Երևան՝ թեմական դպրոց։

Գումարով առնողներին կը լինի զեղչ։ (ու. շ.) 573. 8—7

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.